

Հաստատում եմ՝

Գիտխորհրդի նախագահ

ռեկտոր՝



Ն. Ն. Գաղբեկյան

« 01 » 09 2020թ.



ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ՝

091101.00.7 -«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ»

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝

ԲԺՇԿ-ՍՏՈՄԱՏՈԼՈԳ

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը /ՄԿԾ/, նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահակիցների և գործատուների համար:

Այն ներկայացնում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող արդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի բովանդակության մասին, որն ակնկալում է ուսանողը և որին կարող է հասնել, եթե նա լիարժեքորեն օգտվում է իրեն առաջարկվող և տրամադրվող ուսումնական հնարավորություններից:

1. Ընդհանուր դրույթներ

- Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը՝ *091101.00.7-
«Ստոմատոլոգիա»*
- Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ՝ *Որակավորումների ազգային
շրջանակի 6-րդ, 7-րդ մակարդակ*
- ՄԿԾ-ի յուրացման ժամկետը՝ *5 տարի*
- Կրեդիտների քանակը՝ *300 /երեք հարյուր /*
- Շնորհվող որակավորումը՝ *Բժիշկ-ստոմատոլոգ*
- Բարձրագույն ուսումնական հաստատություն՝ *Ավանդական բժշկության համալսարան
/ԱԲՀ/*
- Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ՝ *Ստոմատոլոգիական*
- Կրթական ծրագրի ուսուցման ձևը՝ *Առկա*
- Կրթական գործունեությունն իրականացվում է՝ *ՀՀ պետական լեզվով
Օտարերկրացիների համար՝ անգլերեն լեզվով*
- Կրթական ծրագիրը լիցենզավորված և հավատարմագրված է՝ *Լիցենզիա - N 0002
Հավատարմագիր - N 128*

1.1. Ներածություն

ԱԲՀ-ի կողմից իրականացվող 091201.00.7-«Բուժական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը /ՄԿԾ/ իրենից ներկայացնում է փաստաթղթերի փաթեթ, որոնք վերանայվել և մշակվել են ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի կողմից և հաստատվել համալսարանի գիտական խորհրդում /31.08.2020թ-ին արձանագրություն N 2/՝ աշխատաշուկայի պահանջներին և ՀՀ պետական կրթական նորմերի, ՈԱՇ-ի կրթական չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև հաշվի են առնվել արտասահմանյան համանման բուհերի օրինակելի կրթական ծրագրերը:

ՄԿԾ-ն կարգավորում է՝ կրթական ծրագրի գործընթացի նպատակները, ակնկալվող արդյունքները, բովանդակությունը և դրա իրականացման պայմաններն ու տեխնոլոգիաները, շրջանավարտի պատրաստվածության որակի գնահատումը և իր մեջ ներառում է. ուսումնական պլանը, դասընթացների, դասախոսությունների և առարկաների (մոդուլներ) աշխատանքային ծրագրերը և այլ նյութեր, ինչպես նաև

ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման օրացուցային ուսումնական ժամկետները և համապատասխան կրթական տեխնոլոգիաների իրականացումն ապահովող մեթոդական նյութերը:

1.2. 091101.00.7 -«Մտոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ մշակման նորմատիվային փաստաթղթեր

ՄԿԾ մշակման նորմատիվային իրավական հիմքը կազմում են.

- «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը
- Մասնագիտական կրթության որակի ապահովման /ՈԱՇ/-ի կրթական չափորոշի պահանջները
- ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչը:

1.3. Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը

1.3.1. Մասնագիտական կրթական ծրագրի նպատակը /ատաքելություն/

ՄԿԾ-ի նպատակն է՝

- պատրաստել առողջապահության, բժշկագիտության և բժշկական կրթության ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող բժիշկ-ստոմատոլոգներ, ովքեր կունենան հիմնարար և համակարգված ժամանակակից խոր մասնագիտական գիտելիքներ, հմտություններ և կարողունակություններ բժշկության ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալելու, հետազոտական աշխատանք կատարելու, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդելու և հաջորդող կրթական մակարդակում ուսումը շարունակելու համար:

ՄԿԾ-ի վերոհիշյալ նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

1. ապահովել բժշկական կրթություն, որը կզարգացնի ուսանողի մտածողության մշակույթը, կխորացնի նրա գիտակցողությունը ապագա մասնագիտության սոցիալական նշանակության մասին, կստեղծի բարձր մոտիվացիա մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար;

2. իրականացնել բնագիտական հիմնարար օրինաչափությունների ուսուցանում, որը անհրաժեշտ է բժշկական մասնագիտական գործունեության համար:
3. տալ լիարժեք և արդի մասնագիտական գիտելիքներ և զարգացնել այդ գիտելիքների կիրառման կարողությունները և հմտությունները հետագա մասնագիտական գործունեության համար:
4. ուսուցանել տեղեկատվության ստացման, պահպանման, մշակման և կառավարման հիմնական ժամանակակից մեթոդները, եղանակներն ու միջոցները:
5. սերմանել ինքնազարգացման և սեփական որակավորումների բարելավման ցանկություն:
6. ձևավորել նախատեսված մասնագիտական գործունեությամբ զբաղվելու կայուն մոտիվացիա:
7. զարգացնել կազմակերպչական և կառավարչական լուծումներ գտնելու կարողություններ ոչ ստանդարտ իրավիճակներում և դրանց համար պատասխանատվություն կրելու պատրաստակամություն:
8. նպաստել մասնագիտական գործունեության շրջանակներում գիտական և տեխնոլոգիական նվաճումների օգտագործումը և խթանել առողջապահության ոլորտում նորարարական գործունեությունը:
9. ստեղծել ֆունդամենտալ և պրակտիկ պայմաններ մասնագետների պատրաստման համար՝ հիմնվելով բժշկական կրթության միջազգային ստանդարտների, հայրենական ավանդույթների վրա:

1.3.2. ՄԿԾ-ի կառուցվածքը և նկարագիրը

ՄԿԾ-ի պաշտոնական տևողությունը 5 տարի է, 250 շաբաթ, այդ թվում՝ տեսական ուսուցումը, գործնական և լաբորատոր պարապմունքները, քննաշրջանները, ուսումնաարտադրական պրակտիկաները, արձակուրդները:

Կրթական ծրագրի ծավալը 1 ուսումնական տարում կազմում է 60 կրեդիտ:

Ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը սահմանված է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային /30 ժամ/ և արտալսարանային /ինքնուրույն՝ 15 ժամ/ աշխատանքները:

Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնումով: Ամփոփիչ ատեստավորմանը թույլատրվում են մասնակցել ուսումնական պլանները

լիովին կատարած ուսանողները: Ամփոփիչ ատեստավորման քննությունները բարեհաջող հանձնման դեպքում շրջանավարտին շնորհվում է բժիշկ-ստոմատոլոգի որակավորում:

ԱԲՀ-ի 091101.00.7 -«Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ը բաղկացած է հետևյալ կրթամասերից՝

- I. Սոցիալ-հումանիտար դասընթացների կրթամաս – 27 կրեդիտ
- II. Բնագիտական և բժշկական սարքանական դասընթացների կրթամաս-87 կրեդիտ
- III. Կանխարգելիչ բժշկության դասընթացների կրթամաս –13 կրեդիտ
- IV. Ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների կրթամաս – 155 կրեդիտ
- Ուսումնաարտադրական պրակտիկա - 15 կրեդիտ
- Ավարտական ամփոփիչ ատեստավորում (3 կրեդիտ), որը կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգում՝ ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:
- V. Լրացուցիչ ընտրովի դասընթացներ
- VI. Ֆակուլտատիվ դասընթաց

1.3.3. Դիմորդին ներկայացվող պահանջներ

- Դիմորդը պետք է ունենա պետական նմուշի վկայական՝ միջնակարգ, միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթության մասին:
- Դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնելու նշված երեք՝ «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Քիմիա» մրցութային քննություններից երկուսը և «Հայոց լեզու»՝ որպես ոչ մրցութային առարկա:
- Ընդունելությունը կատարվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

2. 091101.00.7 -«Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ն յուրացրած

շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը

2.1. ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտի մասնագիտական գործունեության շրջանակը ներառում է.

Շրջանավարտը բուհը ավարտելուց հետո իրավունք ունի իրականացնելու բուժկանխարգելիչ, ախտորոշիչ գործունեություն միայն որակավորված մասնագետի անմիջական հսկողությամբ:

Շրջանավարտն ինքնուրույն կարող է զբաղվել կրթական, գիտահետազոտական գործունեությամբ՝ բժշկագիտության, հիմնարար և տեսական ուղղություններով:

Շրջանավարտն իրավունք չունի իրականացնել այնպիսի գործունեություն, որը կապված է հիվանդի ինքնուրույն վարման հետ: Ինքնուրույն բուժական, կանխարգելիչ և ախտորոշիչ գործունեություն ծավալելու համար բժշկ-ստոմատոլոգի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է ուսումնառի կլինիկական օրդինատորայի /ռեզիդենտորայի (հետբուհական) կրթական ծրագրով՝ ստանալով կլինիկական մասնագիտությամբ համապատասխան որակավորում:

2.2. ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտի մասնագիտական գործունեության օբյեկտներն են՝

- ֆիզիկական անձիք /այսուհետ՝ հիվանդներ/
- բնակչությունը,
- ստոմատոլոգիական օգնության համար նախատեսվող և քաղաքացիների առողջության պահպանման պայմանների ստեղծման համար անհրաժեշտ միջոցների և տեխնոլոգիաների համախումբը:

2.3. ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտի մասնագիտական գործունեության տեսակները հանդիսանում են.

- բժշկական,
- կազմակերպչական-կառավարման,
- գիտահետազոտական
- կրթական

2.4. Շրջանավարտի մասնագիտական գործունեության խնդիրները

ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտը, պետք է լուծի մասնագիտական գործունեության հետ կապված հետևյալ խնդիրները:

- բժշկական գործունեություն
 - կանխարգելիչ և հակահամաճարակաբանական միջոցառումների միջոցով ազգաբնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելում,
 - մասնակցություն կանխարգելիչ բժշկական զննումների, դիսպանսերացման և դիսպանսեր հսկողության միջոցառումներին,
 - տարբեր սեռատարիքային խմբերի ստոմատոլոգիական հիվանդությունների, ինչպես նաև մարդկանց առողջության վրա դրանց ազդեցության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն,

- ստոմատոլոգիական հիվանդությունների և հիվանդների պաթոլոգիական դրության ախտորոշում,
 - հիվանդների սուր վիճակների ախտորոշում,
 - ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության անցկացում և մասնակցություն այլ բժշկական փորձաքննությունների,
 - ամբուլատոր և ցերեկային ստացիոնարի պայմաններում ստոմատոլոգիական օգնության տրամադրում,
 - մասնակցություն արտակարգ իրավիճակների պայմաններում առաջին բուժօգնության ցուցաբերման գործընթացին, այդ թվում մասնակցություն բժշկական տարհանմանը,
 - մասնակցություն ստոմատոլոգիական հիվանդություններով հիվանդների բժշկական վերականգնողական և առողջարանային բուժմանը,
 - ազգաբնակչության, հիվանդների և նրանց ընտանիքների մոտիվացիայի ձևավորում՝ ուղղված սեփական և շրջապատի առողջության պահպանմանը և ամրապնդմանը,
 - հիվանդներին՝ բուժական բնույթի հիմնական հիգիենիկ միջոցառումների ուսուցում, որը կնպաստի ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելմանը և առողջության ամրապնդմանը,
- **կազմակերպչական-կառավարման գործունեություն**
- բժշկական հաստատություններում և նրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստոմատոլոգիական օգնության կազմակերպման հիմնական սկզբունքների կիրառում,
 - ստոմատոլոգիական բժշկական հաստատություններում հիվանդների և բուժանձնակազմի համար բարենպաստ պայմանների ապահովում,
 - բժշկական հաստատություններում բժշկական փաստաթղթերի վարում,
 - բժշկական փորձաքննության անցկացման կազմակերպում,
 - մասնակցություն հիվանդներին տրամադրվող ստոմատոլոգիական օգնության որակի գնահատմանը,
 - ինֆորմացիոն անվտանգության պահպանման հիմնական պահանջների կատարում,

▪ **գիտահետազոտական գործունեություն**

- բժշկական գրականության և պաշտոնական վիճակագրությունների վերլուծություն, մասնակցություն վիճակագրական վերլուծությունների անցկացմանը և ստացված արդյունքների հանրայնացում,
- մասնակցություն առողջապահության բնագավառում գիտահետազոտական խնդիրների լուծմանը, որոնք վերաբերում են ախտորոշմանը, բուժմանը, բժշկական վերականգնմանը և կանխարգելմանը:

▪ **կրթական գործունեություն**

- բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդում:

3. 091101.00.7 –«Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ի յուրացման արդյունքում

ձևավորվող մասնագիտական գործունեության բնութագիրը

ՄԿԾ-ի յուրացման արդյունքները որոշվում են շրջանավարտի կողմից ձեռք բերված որակներով, այն է՝ նրա՝ գիտելիքները, կարողությունները և անձնական որակները կիրառելու ընդունակությամբ՝ ըստ մասնագիտական գործունեության խնդիրների:

ՄԿԾ յուրացման արդյունքում շրջանավարտի մոտ պետք է ձևավորվեն ընդհանրական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական վերջնարդյունքներ:

Շրջանավարտը, որը յուրացրել է ստոմատոլոգիայի ՄԿԾ-ն, պետք է տիրապետի հետևյալ ընդհանրական վերջնարդյունքների՝

ԸՎ	Ընդհանրական վերջնարդյունքներ
ԸՎ-1	Ունենա վերացական մտածողություն, համադրելու և վերլուծելու ունակություն հումանիտար, բնագիտական, բժշկականսաբանական և կլինիկական գիտությունների մեթոդները մասնագիտական և սոցիալական գործունեության ընթացքում:
ԸՎ-2	Կարողանա գործել ոչ ստանդարտ իրավիճակներում, կրի սոցիալ-բարոյական պատասխանատվություն ընդունած որոշումների համար
ԸՎ-3	Կարողանա ցուցաբերել I օգնության և պաշտպանության մեթոդներ արտակարգ իրավիճակների պայմաններում:
ԸՎ-4	Կարողանա ցուցաբերել կոլեկտիվում աշխատելու պատրաստակամություն, հանդուրժել սոցիալական, էթնիկ, դավանական և մշակութային տարբերությունները:

ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտը պետք է տիրապետի հետևյալ ընդհանուր մասնագիտական վերջնարդյունքների՝

ԸՄՎ	Ընդհանրական մասնագիտական վերջնարդյունքներ
ԸՄՎ-1	Տեղեկատվական անվտանգության հիմնական պահանջներից էլնելով՝ կարողանա լուծել մասնագիտական գործունեության հիմնական խնդիրները՝ օգտագործելով տեղեկատվական, մատենագիտական ռեսուրսները, բժշկականսաբանական տերմինաբանությունը, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները:
ԸՄՎ-2	Կարողանա մասնագիտական գործունեություն ծավալելիս հաղորդակցվել մայրենի և օտար լեզուներով՝ բանավոր և գրավոր:
ԸՄՎ-3	Կարողանա մասնագիտական գործունեության մեջ կիրառել բարոյահոգեբանական, դեոնտոլոգիական սկզբունքները և իրավական գիտելիքների հիմունքները:
ԸՄՎ-4	Կարողանա և պատրաստակամ լինի վերլուծել սեփական գործունեության արդյունքները՝ մասնագիտական սխալները կանխելու նպատակով:

ԸՄՎ-5	Բժշկական հիմնարկներում աշխատանքի կազմակերպում և բժշկական փաստաթղթերի վարում:
ԸՄՎ-6	Մասնագիտական խնդիրները լուծելիս կարողանա կիրառել ֆիզիկոքիմիական, մաթեմատիկական և այլ բնագիտական հիմնական հասկացություններն ու գիտելիքները:
ԸՄՎ-7	Մասնագիտական խնդիրները լուծելիս, բժշկական օգնության ժամանակ, կարողանա կիրառել դեղորայքային, ավանդական բժշկության և ոչ դեղորայքային բուժման այլ միջոցներ և համադրել դրանք:
ԸՄՎ-8	Մասնագիտական խնդիրները լուծելիս կարողանա գնահատել մարդու օրգանիզմում մորֆոֆունկցիոնալ փոփոխությունները, ֆիզիոլոգիական և ախտաբանական պրոցեսները՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները:
ԸՄՎ-9	Կարողանա կիրառել բժշկական և ստոմատոլոգիական օգնության համար նախատեսված բժշկական գործիքներ և սարքավորումներ:

ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտը պետք է տիրապետի հետևյալ մասնագիտական վերջնարդյունքների:

Կանխարգելիչ գործունեություն

ՄՎ	Մասնագիտական վերջնարդյունք
ՄՎ-1	Կարողանա և պատրաստակամ լինի իրականացնել առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված համալիր միջոցառումներ՝ ներառելով առողջ ապրելակերպի ձևավորումը, հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելումը, վաղ ախտորոշումը, դրանց ծագման և զարգացման պայմանների և պատճառների հայտնաբերումը, ժառանգական հիվանդությունների գենոտիպային և ֆենոտիպային դրսևորումները, դիմաձնոտային ապարատի բնածին խանգարումների գենետիկական հիմքերը, ինչպես նաև մարդու առողջության վրա ազդող շրջակա միջավայրի վնասակար ազդակների վերացումը:
ՄՎ-2	Կարողանա և պատրաստ լինի անցկացնել կանխարգելիչ բժշկական հետազոտություններ, դիսպանսերացում, և իրականացնի ստոմատոլոգիական ախտաբանությամբ հիվանդների դիսպանսեր հսկողություն:

Ախտորոշիչ գործունեություն

ՄՎ-3	Կարողանա լսել և վերլուծել հիվանդի գանգատները, անամնեզի տվյալները, զննման, լաբորատոր, գործիքային, ախտաբանաանատոմիական, ավանդական և այլ հետազոտությունների արդյունքները՝ ստոմատոլոգիական հիվանդությունների հայտնաբերման կամ ժխտման նպատակով:
------	--

ՄՎ-4	Կարողանա ախտորոշել ստոմատոլոգիական հիվանդությունների և խնդիրների նոզոլոգիաները, միջազգային վիճակագրական դասակարգմանը համապատասխան հիմնական ախտաբանական վիճակները, հիվանդությունների ախտանիշներն ու համախտանիշները:
-------------	--

Բուժական գործունեություն

ՄՎ-5	Կարողանա որոշել տարբեր ստոմատոլոգիական հիվանդությունների նոզոլոգիաներով հիվանդների վարման տակտիկան:
ՄՎ-6	Կարողանա վարել տարբեր տարիքային խմբերի ստոմատոլոգիական հիվանդությունների բուժումը ամբուլատոր պայմաններում և ստացիոնարում, ինտեգրելով ժամանակակից և ավանդական բժշկության բուժման մեթոդները:
ՄՎ-7	Կարողանա ցուցաբերել բժշկական օգնություն արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև մասնակցել բժշկական տարհանմանը:

Վերականգնողական գործունեություն

ՄՎ-8	Կարողանա որոշել բնական բուժիչ ազդակների, դեղանյութերի, ոչ դեղորայքային թերապիայի և բուժման այլ մեթոդների կիրառումը բժշկական վերականգնողական և առողջարանային բուժման կարիք ունեցող ստոմատոլոգիական հիվանդների մոտ:
-------------	---

Հոգեբանամանկավարժական գործունեություն

ՄՎ-9	Կարողանա ուսուցանել ազգաբնակչությանն առողջացման բնույթի հիմնական հիգիենիկ միջոցառումները, հիմնական ֆիզիոլոգիական ցուցանիշների ինքնահսկողության հմտությունները, որոնք նպաստում են առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելմանը:
ՄՎ-10	Կարողանա ծավալել լուսավորչական գործունեություն՝ առողջ կենսակերպ վարելու հմտություններով և ռիսկի ազդակները վերացնելու նպատակով:

Գիտահետազոտական գործունեություն

ՄՎ-11	Կարողանա ապացուցողական բժշկության հիման վրա վերլուծել և հանրությանը ներկայացնել բժշկական տեղեկատվություն:
ՄՎ-12	Կարողանա մասնակցել գիտա-բժշկական հետազոտությունների՝ կիրառելով թեմային վերաբերող հայրենական և արտասահմանյան փորձը:
ՄՎ-13	Կարողանա մասնակցել ազգաբնակչության առողջության պահպանմանն ուղղված նոր մեթոդների ներդրմանը:

**4.191101.00.7 «Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ի իրականացման
 ժամանակ ուսումնական գործընթացի բովանդակությունը և կազմակերպումը
 կանոնավորող փաստաթղթեր**

ՄԿԾ-ն իրենից ներկայացնում է փաստաթղթերի համակարգ, որը թարմացվում է՝ հաշվի առնելով առողջապահության, գիտության, մշակույթի, տնտեսական, տեխնիկայի, տեխնոլոգիաների և սոցիալական ոլորտները:

Մասնագիտական կրթական ծրագրի բովանդակությունը, կրթական գործընթացի կազմակերպումը և իրականացումը ներկայացնող փաստաթղթեր.

- 4.1. Ըստ առարկաների ձևավորվող վերջնարդյունքներ
- 4.2. Ուսումնական պլան
- 4.3. Տարեկան օրացուցային ուսումնական գրաֆիկ
- 4.4. Առարկաների աշխատանքային ծրագրեր
- 4.5. Ուսումնաարտադրական պրակտիկաների ծրագրեր:

ՄԿԾ-ի իրականացման ժամանակ նախատեսվում են ուսումնաարտադրական պրակտիկաների հետևյալ տեսակները՝

▪ Բուժքրոջ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	II կուրս	4-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /թերապևտ/ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	III կուրս	6-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	IV կուրս	8-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /օրթոպեդ/ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	IV կուրս	8-րդ կիսամյակ
▪ Մանկական բժիշկ ստոմատոլոգի օգնական	3 կրեդիտ	90 ժամ	V կուրս	9-րդ կիսամյակ
Ընդամենը՝	15 կրեդիտ	450 ժամ		

Ուսումնաարտադրական պրակտիկան անցկացվում է համապատասխան կլինիկաներում՝ հերթապահությունների ձևով կամ ցիկլերով, ինչպես նաև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում:

4.6. Պետական ամփոփիչ ատեստավորում:

Սա իր մեջ ներառում է պետական քննությունների նախապատրաստումը և հանձնումը:

Ամփոփիչ ատեստավորման պետական քննություններ՝

- 1. Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա
- 2. Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա
- 3. Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա

5. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ

Դասավանդումը և ուսուցումն իրականացվում է խմբային ձևաչափով, իսկ սեմինար, գործնական աշխատանքները և պրակտիկան ներառում են ձևավորված փոքրաթիվ խմբեր: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:

Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատ/ պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:

Դասախոսություններ – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,

Սեմինարներ – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,

Գործնական պարապմունքներ - փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն,

Աջակցվող ինքնուրույն ուսուցում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ - անհատական հետազոտության և զարգացման աջակցում,

Անհատական խորհրդատվություն - Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

6. ՄԿԾ-ի յուրացման որակի գնահատման չափանիշները և մեթոդները:

«Ստոմատոլոգի» մասնագիտության ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով: Գնահատվում են ուսանողի՝ գիտելիքը, ունակությունները, կարողությունները, ինքնուրույնությունը և ակտիվությունը:

Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական /սկզբնական/ վիճակը և վերջնական /ելքային/ արդյունքը:

Դասընթացների գնահատման մեթոդներից են՝

- գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ և հարցազրույցներ,

- գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում /100 միավոր/, համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:

Գնահատման մանրամասները տես՝ «ԱԲՀ ուսանողների գիտելիքների գնահատման» կարգում:

Սովորողների յուրացման որակի գնահատումը ներառում է առաջադիմության միջանկյալ և պետական ամփոփիչ ատեստավորման ընթացիկ հսկողություն:

Գնահատման համակարգերի միջոցներն ու տեխնոլոգիաները տրվում է յուրաքանչյուր առարկայի աշխատանքային ծրագրերում՝ ստուգարքների և քննությունների ձևով:

Գնահատման համակարգի հիմնական միջոցները ներառում են ստուգողական հարցեր, թեստային հարցեր, իրավիճակային խնդիրներ, ռեֆերատների թեմաներ և հսկողության այլ միջոցներ, որոնք թույլ են տալիս գնահատել սովորողի ձևավորված կարողության աստիճանը: Ուսման ընթացքում օգտագործվում են հսկողության հետևյալ տեսակները՝

- Բանավոր հարցում

- Գրավոր աշխատանքներ

Առաջադիմության ընթացիկ հսկողության տեսակներից յուրաքանչյուրն առանձնանում է ըստ կարողությունների հայտնաբերման եղանակի՝

- Դասախոսի և ուսանողի զրույցի ընթացքում

- Գրավոր նյութերի ստեղծման և ստուգման ընթացքում

Բանավոր հարցումը թույլ է տալիս գնահատել ուսանողի մտահորիզոնն ու գիտելիքները, պատասխանը տրամաբանորեն կառուցելու ունակությունը, բանավոր խոսքի տիրապետմանը և այլ հմտություններ: Գրավոր պատասխանները թույլ են տալիս դասախոսին տնտեսել ժամանակը, ստուգել գնահատման հիմնավորումը և փոքրացնել

սուբյեկտիվ մոտեցման աստիճանը՝ հիմնվելով ուսանողի անհատական ընդունակությունների վրա:

Հսկողության ամեն տեսակն իրականացվում է որոշակի ձևերի օգնությամբ, որոնք կարող են նույնը լինել մի քանի տեսակ հսկողության համար, օրինակ՝ բանավոր և գրավոր քննություն, ինչպես նաև սպեցիֆիկ: Համապատասխանաբար, հսկողության որոշ ձևերի շրջանակներում կարող են համադրվել դրա մի քանի տեսակները (օր.՝ առարկայից քննությունը կարող է ներառել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր փորձություն): Հսկողության ձևերն են՝ ռեֆերատ, թեստ, ստուգողական աշխատանք, հարցում, ստուգարք, քննություն:

- Սովորողները պետական ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական ծրագրի առարկաների ծավալային ուսումնասիրությունից հետո:
- Պետական ատեստավորման միջառարկայական ամփոփիչ քննությունը իրականացվում է փուլերով և ներառում է հետևյալ պարտադիր ատեստավորման քննությունները.
 - գործնական հմտությունների յուրացման մակարդակի ստուգում,
 - տեսական պատրաստվածության մակարդակի ստուգում՝ թեստային քննության միջոցով,
 - բանավոր քննություն՝ կոնկրետ մասնագիտական խնդիրներ լուծելու հմտությունների գնահատում:

Ավարտական ամփոփիչ ատեստավորումը հաջող հանձնած սովորողներին տրվում է դիպլոմ՝ մասնագիտությունն ավարտելու մասին: Այն ուսանողները, որոնք անբավարար են ստացել ատեստավորումից կամ թերի են թողել ծրագիրը, ստանում են տեղեկանք՝ համալսարանի կողմից սահմանված նմուշով:

7. ՄԿԾ-ի իրականացման պայմանները

7.1. Մասնագետի պատրաստման կադրային ապահովում

Մասնագետի պատրաստման ՄԿԾ իրականացումը ապահովվում է գիտամանկավարժական կադրերի կողմից, որոնք, որպես կանոն, ունեն հիմնական կրթություն, որն համապատասխանում է դասավանդվող առարկայի պրոֆիլին, և համակարգված զբաղվում են գիտական և (կամ) գիտամեթոդական գործունեությամբ:

Գիտական կոչում և (կամ) գիտական աստիճան ունեցող դասախոսների մասնաբաժինը պետք է կազմի տվյալ ՄԿԾ ծրագրով ուսումնական գործընթացն ապահովող դասավանդողների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 50 տոկոսը:

Մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական գործընթացն ապահովող դասախոսներն ունեն հիմնական կրթություն և առնվազն 52 տոկոսն ունեն դասավանդվող առարկայի պրոֆիլին համապատասխան գիտական աստիճաններ կամ գիտական կոչումներ:

Մասնագիտական տեսական և գործնական ուսուցման բովանդակության ընդհանուր կառավարման մեջ կարող է ներգրավվել համապատասխան մասնագիտական ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետը:

7.2. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովում

Մասնագետի պատրաստման ՄԿԾ-ն ապահովվում է ՄԿԾ բոլոր ուսումնական դասընթացների առարկաների (մոդուլների) համար նախատեսված ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:

Ուսանողների արտալսարանային աշխատանքներն ունեն մեթոդական աջակցություն և դրանց կատարման համար անհրաժեշտ ժամանակի հիմնավորում:

Յուրաքանչյուր ուսանողն ունի հասանելիություն էլեկտրոնային գրադարանային համակարգին, որը պարունակում է ուսումնասիրվող հիմնական առարկաների հետ կապված հրապարակումները:

7.3. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովում

Մասնագետի պատրաստման ՄԿԾ իրականացնող ԱԲՀ-ն ունի նյութատեխնիկական անհրաժեշտ հենք, որը ապահովում է ուսանողների բոլոր տեսակի՝ առարկայական և միջառարկայական ուսուցման, լաբորատոր, գործնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, որոնք նախատեսված են բուհի ուսումնական պլանով և համապատասխանում են գործող սանիտարական և հակահրդեհային կանոնակարգերին ու նորմերին:

Մասնագետի պատրաստման ՄԿԾ իրականացման համար Համալսարանն ունի հետևյալ նյութատեխնիկական ապահովումը:

Բուհում օգտագործվում են էլեկտրոնային նյութեր և ուսումնական պրոցեսի համար ունի համացանցին միացված առնվազն 30 համակարգիչ: Ուսանողներն ուսուցման ընթացքում ապահովված են համակարգչային լսարաններով:

8. Համալսարանի ուսանողների ընդհանուր կրթական կարողությունների զարգացումն ապահովող սոցիալ-մշակութային միջավայրի բնութագիրը:

Դաստիարակչական աշխատանքի կազմակերպումը արտացոլված էն Համալսարանի կանոնակարգերում և կարգերում, համալսարանի դաստիարակչական աշխատանքի պլաններում, ամբիոնների և դասախոսների տարեկան աշխատանքային պլաններում:

Դաստիարակչական աշխատանքի ներբուհական ներքին ակտեր են հանդիսանում հրամանները, կանոնակարգերը, ծրագրերը, հրահանգները, ծառայողական գրությունները և այլ փաստաթղթեր, որոնք կարգավորում են դաստիարակչական գործունեությունը:

Դաստիարակչական աշխատանքի պլանը ներառում է ավանդական միջոցառումներ՝ հաշվի առնելով ուսանողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները, երկրի և բուհի պատմական հիշարժան տարեթվերը, նախատեսում է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ուսանողների քաղաքացիական և հայրենասիրական, մշակութային-բարոյական, մասնագիտական-աշխատանքային դաստիարակությանը, մանագիտական կողմնորոշմանը, գիտամեթոդական ապահովմանը, ուսանողների սոցիալական պաշտպանությանը, դաստիարակչական աշխատանքի նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Զգալի աշխատանք իրականացնում է նաև ուսանողական խորհուրդը:

Դաստիարակչական աշխատանքի իրականացման ընթացքում բուհի աշխատակիցները օգտագործում են տարբեր աշխատաձևեր՝ անհատական աշխատանք ուսանողների հետ, ուսանողական գիտական ընկերության գործունեություն, մասնագիտական ծրագրերի և նախագծերի իրականացում, նորարարական գործունեություն, համագործակցություն սոցիալական գործընկերների հետ՝ քաղաքային, մարզային և միջտարածաշրջանային մակարդակներում:

Դաստիարակչական նպատակներով Համալսարանում լայնորեն օգտագործվում են ուսուցման գործընթացի հնարավորությունները: Մասնավորապես, հումանիտար առարկաների աշխատանքային ուսումնական ծրագրերի մեջ ներառված են բարոյական, մարդասիրական և հայրենասիրական դաստիարակության, ինչպես նաև հոգեբանության, մշակութաբանության, հայոց լեզվի և խոսքի մշակույթի վերաբերյալ հարցեր: Ուսումնական ծրագրերում առկա է արտահայտված մշակութաբանական

բաղադրիչ: Բնագիտական և կլինիկական ցիկլերի առարկաների ուսումնասիրության ընթացքում լայնորեն նշվում են նաև հայրենական գիտնականների ձեռքբերումները:

Ուսանողների ֆիզիկական դաստիարակությունն ուղղված է առողջ ապրելակերպի ձևավորմանը, մասնակցություն տարբեր մակարդակների (մարզային կամ հանրապետական) սպորտային մրցույթներին և այլն:

Համալսարանն ունի բավականին արդյունավետ կազմակերպչական կառուցվածք, որն ապահովում է շրջանավարտների մոտ ընդհանուր մշակութային (սոցիալական և անհատական) որակների զարգացումը: Դաստիարակչական աշխատանքի կազմակերպման և կատարելագործման մեջ կա զգալի ներուժ, ձևավորված կառուցվածքի շրջանակներում նոր հնարավորությունների որոնման հնարավորություն:

9. Հետագա ուսման հնարավորությունները

091101.00.7-«Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ն յուրացրած բժիշկ-ստոմատոլոգը պատրաստ է կրթությունը շարունակելու համապատասխան մասնագիտական ծրագրերով օրդինատուրայում և ասպիրանտուրայում /տեսական ամբիոններ/:



**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Մասնագիտությունը՝ 091101.00.7- «Ստոմատոլոգիա»

Հավելված

Մասնագիտական որակավորում՝
«Բժիշկ-ստոմատոլոգ»
Ուսման ժամկետը՝ 5 տարի
Ինտեգրացված կրթական ծրագիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱՏԻԿ

Կուրս	Սեպտեմբեր				29.	Հոկտեմբեր			27.	Նոյեմբեր				Դեկտեմբեր				29.	Հունվար			26.	Փետրվար			23.	Մարտ				30.	Ապրիլ					
	1	8	15	22	-	6	13	20	-	3	10	17	24	1	8	15	22	-	5	12	19	-	2	9	16	-	2	9	16	13	-	6	13	20			
	7	14	21	28	5.	12	19	26	2.	9	16	23	30	7	14	21	28	4.	11	18	25	1.	8	15	22	1.	8	15	22	29	5.	12	19	26			
1																	//	::	::	::	//																
2																	//	::	::	::	//																
3																	//	::	::	::	//																
4																	//	::	::	::	//																
5																	//	::	X	X	//																

Ժամանակի բյուջեի ամփոփիչ տվյալներ /շաբաթներով/

Կուրս	27.	Մայիս				Հունիս				29.	Հուլիս			27.	Օգոստոս				Տեսական ուսուցում	Քննաշրջան	Ուսումն./ արտադր. պրակտ	Ավարտական ամփոփիչ ատեստավորում	Արձակուրդ	Ընդամենը
	-	4	11	18	25	1	8	15	22	-	6	13	20	-	3	10	17	24						
	3.	10	17	24	31	7	14	21	28	5.	12	19	26	2.	9	16	23	31						
1						::	::	::	//	//	//	//	//	//	//	//	//	//	34	6			12	52
2				::	::	::	X	X	//	//	//	//	//	//	//	//	//	//	32	6	2		12	52
3				::	::	::	X	X	//	//	//	//	//	//	//	//	//	//	32	6	2		12	52
4		::	::	::	X	X	X	X	//	//	//	//	//	//	//	//	//	//	30	6	4		12	52
5						:///	:///	:///											33	2	2	3	2	42
																		161	26	10	3	50	250	

Տեսական ուսուցում

Արձակուրդ

 //

Պետական քննություն

 :///

Քննաշրջան

 ::

Ուսումնաարտադրական պրակտիկա

 X

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

N	Առարկայի անվանումը	Շարքայական ծանրաբեռնվածություն	Կրեդիտ	ԺԱՄԵՐ Այդ թվում								Գնահատում		Շարքայական ծանրաբեռնվածություն	Կրեդիտ	ԺԱՄԵՐ Այդ թվում								Գնահատում	
				Ընդամենը	Լսարանային	Դասախոսություն	Գործնական պարասպանք	Արտալսարանային	Ինքնուրույն աշխատանքներ	Դասախոսի խորհրդատվություն	Քննություն	Ստուգաթիվ	Քննություն			Ընդամենը	Լսարանային	Դասախոսություն	Գործնական պարասպանք	Արտալսարանային	Ինքնուրույն աշխատանքներ	Դասախոսի խորհրդատվություն	Քննություն	Ստուգաթիվ	Քննություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
		I կուրս																							
I կիսամյակ 17 շաբաթ												II կիսամյակ 17 շաբաթ													
1.	Հայոց լեզու	2	2	60	34		34	26	17	9		++		2	2	60	34		34	26	17	9		++	
2.	Լատիներեն	3	3	90	51		51	39	26	13		++		2	2	60	34		34	26	17	9		++	
3.	Օտար լեզու	3	3	90	51		51	39	25	14		++		2	2	60	34		34	26	17	9		++	
4.	Հայոց պատմություն	3	3	90	51	34	17	39	26	13		++													
5.	Բժշկության պատմություն													3	3	90	51	34	17	39	26	13		++	
6.	Ընդհանուր հոգեբանություն	3	3	90	51	34	17	39	26	13		++													
7.	Բժշկական հոգեբանություն													2	2	60	34	16	18	26	17	9		++	
8.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	3	3	90	51	18	33	39	25	14		++		2	2	60	34	16	18	26	17	9		++	
9.	Բժշկական ֆիզիկա													3	3	90	51	24	27	39	25	14		++	
10.	Ընդհանուր քիմիա	4	4	120	68	24	44	52	34	12	6		1												
11.	Կենսաօրգանական քիմիա													3	3	90	51	26	25	39	21	12	6		2
12.	Կենսաբանություն	5	5	150	85	26	59	65	47	12	6		1	3	3	90	51	14	37	39	21	12	6		2
13.	Մարդու անատոմիա	4	4	120	68	18	50	52	34	12	6		1	4	4	120	68	20	48	52	34	12	6		2

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	
14.	Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն													4	4	120	68	18	50	52	34	18		++		
Ընդամենը		30	30	900	510	154	356	390	260	112	18	6	3	30	30	900	510	168	342	390	246	126	18	8	3	
		II կուրս																								
		III կիսամյակ 17 շաբաթ												IV կիսամյակ 15 շաբաթ												
1.	Փիլիսոփայություն													3	2	60	45	34	11	15	9	6		++		
2.	Կենսաքիմիա	4	4	120	68	24	44	52	34	12	6		3	4	4	120	60	24	36	60	42	12	6		4	
3.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	4	4	120	68	20	48	52	34	18		++		4	4	120	60	20	40	60	42	12	6		4	
4.	Նորմալ ֆիզիոլոգիա	4	4	120	68	24	44	52	34	18		++		4	4	120	60	22	38	60	42	12	6		4	
5.	Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն	4	4	120	68	16	52	52	34	12	6		3													
6.	Մարդու անատոմիա	4	4	120	68	24	44	52	34	12	6		3													
7.	Ախտաբանական անատոմիա													3	3	90	45	20	25	45	33	12		++		
8.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա													3	2	60	45	18	27	15	9	6		++		
9.	Տեղագրական անատոմիա													3	2	60	45	20	25	15	9	6		++		
10.	Ստոմատոլոգիական հիվանդ. կանխարգելում	4	4	120	68	24	44	52	34	18		++														
11.	Նյութագիտություն	2	2	60	34	14	20	26	17	9		++														
12.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	4	4	120	68	20	48	52	34	18		++		2	2	60	30	16	14	30	12	12	6		4	
13.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա													2	2	60	30	14	16	30	18	12		++		
14.	Վիրաբուժական ստոմատոլոգ. պրոպեդևտիկա													2	2	60	30	14	16	30	18	12		++		
Ուսումնաարտադրական պրակտիկա															3	90	60		60	30						
Ընդամենը		30	30	900	510	166	344	390	255	117	18	5	3	30	30	900	510	202	308	390	234	102	24	6	4	
		III կուրս																								
		V կիսամյակ 17 շաբաթ												VI կիսամյակ 15 շաբաթ												
1.	Ախտաբանական անատոմիա	4	4	120	68	22	46	52	34	12	6		5													

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	
2.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	3	3	90	51	20	31	39	25	14		++		4	4	120	60	22	38	60	42	12	6		6	
3.	Դեղաբանություն	3	3	90	51	16	35	39	30	9		++		3	3	90	45	16	29	45	27	12	6		6	
4.	Հիգիենա	3	3	90	51	24	27	39	25	14		++														
5.	Համաճարակաբանություն													3	3	90	45	20	25	45	31	14		++		
6.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	3	3	90	51	16	35	39	21	12	6		5													
7.	Ներքին հիվանդություններ													3	2	60	45	18	27	15	9	6		++		
8.	Ընդհանուր վիրաբուժություն	3	3	90	51	20	31	39	21	12	6		5													
9.	Վիրաբուժական հիվանդություններ													3	3	90	45	20	25	45	27	18		++		
10.	Ճատագայթային ախտորոշում													3	3	90	45	24	21	45	33	12		++		
11.	Մաշկավեներական հիվանդություններ	3	3	90	51	24	27	39	25	14		++														
12.	Թերապևտիկ ստոմատոլոգիա	3	3	90	51	12	39	39	25	14		++		4	3	90	60	12	48	30	12	12	6		6	
13.	Վիրաբուժական ստոմատոլոգիա	3	3	90	51	12	39	39	25	14		++		4	3	90	60	14	46	30	12	12	6		6	
14.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	2	2	60	34	8	26	26	17	9		++		3	3	90	45	12	33	45	33	12		++		
Ուսումնաարտադրական պրակտիկա															3	90	60		60	30						
Ընդամենը		30	30	900	510	174	336	390	248	124	18	7	3	30	30	900	510	176	334	390	195	111	24	5	4	
		IV կուրս																								
		VII կիսամյակ 17 շաբաթ												VIII կիսամյակ 13 շաբաթ												
1.	Հանրային առողջություն և առողջապահություն														3	2	60	39	20	19	21	15	6		++	
2.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում														3	2	60	39	18	21	21	15	6		++	
3.	Ներքին հիվանդություններ,	1	1	30	17	6	11	13	10	3		++														

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
4.	Կլինիկական դեղաբանություն	2	2	60	34	12	22	26	14	6	6		7												
5.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	3	3	90	51	20	31	39	26	13		++													
6.	Իմունոլոգիա և ալերգոլոգիա	2	2	60	34	18	16	26	17	9		++													
7.	Նյարդաբանություն	3	3	90	51	18	33	39	21	12	6		7												
8.	Բնֆեկցիոն հիվանդություններ	3	3	90	51	24	27	39	26	7	6		7												
9.	Աչքի հիվանդություններ	2	2	60	34	16	18	26	17	9		++													
10.	Մանկաբարձություն													4	3	90	52	24	28	38	20	12	6		8
11.	Մանկաբուժություն	2	2	60	34	20	14	26	17	9		++													
12.	Արտակարգ իրավիճակների բժշկություն													3	2	60	39	20	19	21	15	6		++	
13.	Թերապևտիկ ստոմատոլոգիա	4	4	120	68	16	52	52	40	12		++		5	4	120	65	22	43	55	37	12	6		8
14.	Վիրաբուժական ստոմատոլոգիա	4	4	120	68	16	52	52	38	14		++		4	3	90	52	18	34	38	20	12	6		8
15.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	4	4	120	68	10	58	52	38	14		++		4	4	120	52	10	42	68	50	12	6		8
16.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա													2	2	60	26	8	18	34	25	9		++	
17.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում													2	2	60	26	12	14	34	25	9		++	
Ուսումնասիրտադրական պրակտիկա															6	180	120		120	60					
Ընդամենը		30	30	900	510	194	316	390	252	120	18	8	3	30	30	900	510	152	358	390	167	79	24	5	4

1	2	V կուրս																							
		IX կիսամյակ 16 շաբաթ												X կիսամյակ 17 շաբաթ											
		3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1.	Ասեղնաբուծությունը ստոմատոլոգիայում	2	2	60	32	22	10	28	19	9		++													
2.	Անզգայացում և վերակենդանացում													3	2	60	51	16	35	9	5	4		++	
3.	Հոգեբուծություն													2	2	60	34	16	18	26	17	9		++	
4.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում													3	2	60	51	12	39	9	5	4		++	
5.	Դատական բժշկություն	2	2	60	32	16	16	28	19	9		++													
6.	Թերապևտիկ ստոմատոլոգիա	6	4	120	96	22	74	24	18	6		++		6	6	180	102	22	80	78	51	27		++ 10	
7.	Վիրաբուժական ստոմատոլոգիա	6	6	180	96	30	66	84	57	21	6		9	3	3	90	51	16	35	39	30	9		++ 10	
8.	Դիմաձևոտային վիրաբուծություն	3	2	60	48	12	36	12	8	4		++		3	3	90	51	12	39	39	30	9		++	
9.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	4	4	120	64	12	52	56	38	12	6		9	4	3	90	68	12	56	22	16	6		++ 10	
10.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	2	2	60	32	8	24	28	19	9		++		2	2	60	34	8	26	26	17	9		++	
11.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	2	2	60	32	8	24	28	19	9		++		2	2	60	34	12	22	26	17	9		++	
12.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	3	3	90	48	12	36	42	24	12	6		9											++	
13.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ													2	2	60	34	14	20	26	17	9		++	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
Ուսումնաարտադրական պրակտիկա		3	90	60		60	30				++													
* Ավարտական ամփոփիչ ատեստավորում													3	90					90	60		30		
Ընդամենը	30	30	900	540	142	398	360	221	91	18	7	3	30	30	900	510	140	370	390	265	95	30	11	3

Լրացուցիչ ընտրովի դասընթացներ

		II կուրս																							
		III կիսամյակ 17 շաբաթ											IV կիսամյակ 15 շաբաթ												
1.	Բիռեթիկա															3	2	60	45	22	23	15			++
	- Շամանակակից ստոմատոլոգիական քիմիական նյութեր																								
		III կուրս																							
		V կիսամյակ 17 շաբաթ											VI կիսամյակ 15 շաբաթ												
2.	Առողջ կենսակերպի հիմունքներ															3	2	60	45	24	21	15			++
	- Ստոմատոլոգիական ծառայության կազմակերպում																								

		IV կուրս																							
		VII կիսամյակ 17 շաբաթ											VIII կիսամյակ 13 շաբաթ												
3.	Ատամների բնածին արատներ															3	2	60	39	12	27	21			++
	- Շամանակակից տեխնոլոգիաները էթետիկական ստոմատոլոգիայում																								

Ֆակուլտատիվ դասընթաց

1.	Ֆիզդաստիարակություն	4						136						4									128			
----	---------------------	---	--	--	--	--	--	-----	--	--	--	--	--	---	--	--	--	--	--	--	--	--	-----	--	--	--

ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

▪ Բուժքրոջ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	II կուրս	4-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /թերապևտ/ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	III կուրս	6-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	IV կուրս	8-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /օրթոպեդ/ օգնական	3 կրեդիտ	90 ժամ	IV կուրս	8-րդ կիսամյակ
▪ Մանկական բժիշկ ստոմատոլոգի օգնական	3 կրեդիտ	90 ժամ	V կուրս	9-րդ կիսամյակ
Ընդամենը՝	15 կրեդիտ	450 ժամ		

*** Ավարտական ամփոփիչ առեստավորում՝**

1. Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա
2. Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա
3. Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա

Ծանոթություն՝

1. Կլինիկական առարկաների գործնական պարապմունքները անցկացվում են համապատասխան կլինիկաներում:
2. Ուսումնաարտադրական պրակտիկաները նախատեսված են անցկացնել կլինիկաներում հերթապահությունների ձևով կամ ցիկլերով, որոնք ավարտվում են ստուգաքրով:

Գիտխորհրդի նախագահ

ոեկտոր՝ Ն. Խ. Մարտիրոսյան

« 31 » 08 2020թ.



091101.00.7-«Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի հիմնական մոդուլների վերջնարդյունքների ձևավորման քարտեզ

Ընդհանրական վերջնարդյունքների ձևավորում

N		ԸՎ-1	ԸՎ-2	ԸՎ-3	ԸՎ-4
1.	Հայոց լեզու				x
2.	Հայոց պատմություն				x
3.	Փիլիսոփայություն	x			
4.	Լատիներեն				x
5.	Բժշկության պատմություն	x			
6.	Ընդհանուր հոգեբանություն	x	x		x
7.	Բժշկական հոգեբանություն		x	x	
8.	Օտար լեզու				x
9.	Բժշկական ֆիզիկա	x			
10.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	x			
11.	Ընդհանուր քիմիա	x			
12.	Կենսաօրգանական քիմիա	x			
13.	Կենսաբանություն	x			
14.	Կենսաքիմիա	x			
15.	Մարդու անատոմիա				
16.	Տեղագրական անատոմիա	x	x	x	x
17.	Նորմալ ֆիզիոլոգիա	x			
18.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	x			
19.	Իմունոլոգիա և ալերգոլոգիա	x	x		
20.	Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն				
21.	Ախտաբանական անատոմիա	x			
22.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	x			
23.	Դեղաբանություն	x	x	x	
24.	Համաճարակաբանություն		x		
25.	Հիգիենա	x			
26.	Հանրային առողջություն, առողջապահություն	x			
27.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	x			
28.	Ներքին հիվանդություններ	x	x	x	

N		ԸՎ-1	ԸՎ-2	ԸՎ-3	ԸՎ-4
29.	Կլինիկական դեղաբանություն	x	x	x	
30.	Ընդհանուր վիրաբուժություն,		x	x	
31.	Վիրաբուժական հիվանդություններ	x	x		
32.	Անզգայացում և վերակենդանացում				
33.	Ճառագայթային ախտորոշում	x			
34.	Նյարդաբանություն	x			
35.	Աչքի հիվանդություններ				
36.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ				
37.	Մաշկավեներական հիվանդություններ				
38.	Ինֆեկցիոն հիվանդություններ				
39.	Հոգեբուժություն		x	x	
40.	Դատական բժշկություն	x	x		
41.	Մանկաբարձություն	x			
42.	Մանկաբուժություն	x			
43.	Արտակարգ իրավիճակների բժշկություն		x	x	x
44.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x			
45.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում				
46.	Թերապևտիկ ստոմատոլոգիա	x			
47.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում				
48.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	x			
49.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում				
50.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x			
51.	Վիրաբուժական ստոմատոլոգիա	x			
52.	Դիմաձևտային վիրաբուժություն				
53.	Նյութագիտություն	x			
54.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x			
55.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	x			
56.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա				
57.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա				
58.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում				
59.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	x			
Լրացուցիչ ընտրովի դասընթացներ					
1.	Բիոէթիկա				
2.	Առողջ կենսակերպի հիմունքներ	x	x		x
3.	Ատամների բնածին արատներ	x			
Ֆակուլտատիվ դասընթաց					
1	Ֆիզդաստիարակություն				

Ընդհանուր մասնագիտական վերջնարդյունքների ձևավորում

N		ԸՄՎ-1	ԸՄՎ -2	ԸՄՎ -3	ԸՄՎ -4	ԸՄՎ -5	ԸՄՎ -6	ԸՄՎ -7	ԸՄՎ -8	ԸՄՎ -9
1.	Հայոց լեզու	x	x			x				
2.	Հայոց պատմություն									
3.	Փիլիսոփայություն			x						
4.	Լատիներեն	x	x							
5.	Բժշկության պատմություն	x								
6.	Ընդհանուր հոգեբանություն			x	x					
7.	Բժշկական հոգեբանություն			x						
8.	Օտար լեզու	x	x			x				
9.	Բժշկական ֆիզիկա						x			x
10.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	x				x	x			
11.	Ընդհանուր քիմիա						x			
12.	Կենսաօրգանական քիմիա						x			
13.	Կենսաբանություն	x					x			
14.	Կենսաքիմիա						x		x	
15.	Մարդու անատոմիա	x					x		x	
16.	Տեղագրական անատոմիա	x			x			x	x	x
17.	Նորմալ ֆիզիոլոգիա	x					x		x	
18.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	x							x	
19.	Իմունոլոգիա, ալերգոլոգիա	x							x	
20.	Հյուսվածաբանություն, էմբրիո-լոգիա, բջջաբանություն	x					x		x	
21.	Ախտաբանական անատոմիա	x		x		x			x	
22.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	x					x		x	
23.	Դեղաբանություն	x				x		x		
24.	Համաճարակաբանություն				x	x				
25.	Հիգիենա						x			
26.	Հանրային առողջություն, առողջապահություն					x				
27.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա				x	x				x
28.	Ներքին հիվանդություններ	x			x			x	x	
29.	Կլինիկական դեղաբանություն	x			x			x	x	
30.	Ընդհանուր վիրաբուժություն				x				x	x
31.	Վիրաբուժական հիվանդություններ				x			x	x	x
32.	Անզգայացում և վերակենդանացում			x	x		x	x	x	x
33.	Ճառագայթային ախտորոշում	x			x	x				x
34.	Նյարդաբանություն				x			x	x	

N		ԸՍՎ-1	ԸՍՎ-2	ԸՍՎ-3	ԸՍՎ-4	ԸՍՎ-5	ԸՍՎ-6	ԸՍՎ-7	ԸՍՎ-8	ԸՍՎ-9
35.	Աչքի հիվանդություններ	x			x	x	x	x	x	x
36.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	x			x	x	x	x	x	x
37.	Մաշկավեներական հիվանդություններ				x			x	x	
38.	Ինֆեկցիոն հիվանդություններ				x			x	x	
39.	Հոգեբուժություն			x	x			x		
40.	Դատական բժշկություն	x		x	x	x	x		x	
41.	Մանկաբարձություն	x			x	x	x	x	x	x
42.	Մանկաբուժություն			x	x	x	x	x	x	x
43.	Արտակարգ իրավիճակների բժշկություն			x				x		
44.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x		x	x	x	x	x	x	x
45.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում					x			x	
46.	Թերապևտիկ ստոմատոլոգիա	x			x	x	x	x	x	x
47.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	x			x			x	x	
48.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	x			x				x	x
49.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում				x			x		x
50.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x		x	x	x	x	x	x	x
51.	Վիրաբուժական ստոմատոլոգիա	x			x	x	x	x	x	x
52.	Դիմաձևտալին վիրաբուժություն	x			x	x		x	x	x
53.	Նյութագիտություն	x			x		x	x		x
54.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x		x	x	x	x	x	x	x
55.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	x	x	x	x	x		x	x	x
56.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա					x		x	x	
57.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա					x		x	x	
58.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում			x	x					
59.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	x							x	
Լրացուցիչ ընտրովի դասընթացներ										
1.	Բիոէթիկա			x						
2.	Առողջ կենսակերպի հիմունքներ								x	
3.	Ատամների բնածին արատներ			x	x					
Ֆակուլտատիվ դասընթաց										
1.	Ֆիզդաստիարակություն									

Մասնագիտական վերջնարդյունքների ձևավորում

N		ՄՎ-1	ՄՎ-2	ՄՎ-3	ՄՎ-4	ՄՎ-5	ՄՎ-6	ՄՎ-7	ՄՎ-8	ՄՎ-9	ՄՎ-10	ՄՎ-11	ՄՎ-12	ՄՎ-13
1.	Հայոց լեզու													
2.	Հայոց պատմություն													
3.	Փիլիսոփայություն													
4.	Լատիներեն													
5.	Բժշկության պատմություն													
6.	Ընդհանուր հոգեբանություն													
7.	Բժշկական հոգեբանություն	x		x	x	x		x						
8.	Օտար լեզու													
9.	Բժշկական Ֆիզիկա													
10.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա													
11.	Ընդհանուր քիմիա													
12.	Կենսաօրգանական քիմիա													
13.	Կենսաբանություն													
14.	Կենսաքիմիա													
15.	Մարդու անատոմիա													
16.	Տեղագրական անատոմիա													
17.	Նորմալ ֆիզիոլոգիա													
18.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	x											x	
19.	Իմունոլոգիա և ալերգոլոգիա													
20.	Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն													
21.	Ախտաբանական անատոմիա			x	x								x	
22.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	x			x								x	
23.	Դեղաբանություն								x					
24.	Համաճարակաբանություն	x	x					x				x	x	x
25.	Հիգիենա	x							x	x			x	x
26.	Հանրային առողջություն, առողջապահություն												x	x
27.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	x												
28.	Ներքին հիվանդություններ	x									x		x	
29.	Կլինիկական դեղաբանություն	x									x		x	
30.	Ընդհանուր վիրաբուժություն													
31.	Վիրաբուժական հիվանդություններ	x						x						x
32.	Անզգայացում և վերակենդանացում													
33.	Ճառագայթային ախտորոշում			x	x									
34.	Նյարդաբանություն	x		x	x									
35.	Աչքի հիվանդություններ							x			x			
36.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	x										x		

N		ՄՎ-1	ՄՎ-2	ՄՎ-3	ՄՎ-4	ՄՎ-5	ՄՎ-6	ՄՎ-7	ՄՎ-8	ՄՎ-9	ՄՎ-10	ՄՎ-11	ՄՎ-12	ՄՎ-13
37.	Մաշկավեներական հիվանդություններ								x		x			
38.	Ինֆեկցիոն հիվանդություններ													
39.	Հոգեբուժություն													
40.	Դատական բժշկություն				x									
41.	Մանկաբարձություն	x												
42.	Մանկաբուժություն	x								x	x	x		
43.	Արտակարգ իրավիճակների բժշկություն							x						x
44.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա		x	x		x						x	x	x
45.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում	x	x	x	x	x	x			x	x			
46.	Թերապևտիկ ստոմատոլոգիա	x		x	x	x	x		x	x	x	x	x	
47.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	x				x			x					x
48.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	x				x								x
49.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում					x			x			x		x
50.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա			x		x								x
51.	Վիրաբուժական ստոմատոլոգիա		x	x	x	x	x		x					x
52.	Դիմաձևոտային վիրաբուժություն			x	x	x	x		x					x
53.	Նյութագիտություն												x	
54.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա			x		x								x
55.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	x	x	x	x	x	x					x		
56.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	x	x	x	x	x	x							
57.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	x	x	x	x	x	x		x					
58.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	x		x	x	x	x			x	x	x	x	x
59.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	x		x	x	x					x	x		
Լրացուցիչ ընտրովի դասընթացներ														
1.	Բիոէթիկա													
2.	Առողջ կենսակերպի հիմունքներ	x										x		
3.	Ատամների բնածին արատներ	x		x	x	x	x			x	x	x	x	x
Ֆակուլտատիվ դասընթաց														
1.	Ֆիզդաստիարակություն													

	Գ1	Հ1	Հ2	Հ3	Հ4	Հ5	Հ6	Ք1	Ք2	Ք3	Ք4	Գ1	Գ2	Հ1	Հ2	Հ3	Հ4	Հ5	Ք1	Ք2	Ք3	Ք4	Ք5	Ք6
ՄՎ-1	+				+	+	+	+				+	+		+		+	+						
ՄՎ-2	+		+		+			+				+	+	+				+		+				
ՄՎ-3	+	+		+	+	+		+				+	+				+							
ՄՎ-4	+	+	+	+	+	+		+				+	+				+	+					+	
ՄՎ-5	+	+	+		+	+	+	+				+	+					+		+				
ՄՎ-6	+	+	+		+	+		+				+	+				+						+	
ՄՎ-7	+	+			+	+		+	+			+	+		+	+	+		+					
ՄՎ-8	+		+					+				+	+				+						+	
ՄՎ-9	+		+	+	+	+		+	+			+	+		+			+		+				
ՄՎ-10	+		+	+				+				+	+		+					+				
ՄՎ-11	+		+	+	+	+						+	+		+					+				
ՄՎ-12	+	+	+	+	+	+	+	+				+	+	+		+		+		+				
ՄՎ-13	+	+	+	+	+	+	+	+				+	+	+	+	+		+		+				

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Գիտխորհրդի նախագահ

ռեկտոր՝



Ն. Կարապետյան



« 31 » 08 2020թ.

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստումատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստումատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՍՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	Անահիտ Կարապետյան Ամալյա Գրիգորյան Տաթևիկ Խաչատրյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 61 15 00, +374 91 58 24 41, +374 91 53 45 67
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	anahit.karapetyan.54@mail.ru , grigoryan-amalya@mail.ru , tatevyerevan@gmail.com

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	բան.գ.թ. Տաթևիկ Սեդրակի Կարապետյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդրով.	Քննություն	Ստուգարք
I	I	2	17	2	60	34	-	34	17	9	-	+
	II	2	17	2	60	34	-	34	17	9	-	+
Ընդամենը		4	34	4	120	68	-	68	34	18	-	

<p>1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, կարողությունները և տիրապետումները՝</p> <p>Գիտելիքներ՝</p> <p>1. Մայրենի լեզվի և օտար լեզվի քերականական գիտելիքներ, որոնք ձևավորվել են դպրոցում:</p> <p>Կարողություններ</p> <p>1. Մայրենի լեզվի քերականական գիտելիքների համադրումը ուսուցանվող լեզվի քերականական համակարգի հետ:</p> <p>2. Մայրենի և օտար լեզուների բառապաշարային, կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների ընկալում:</p> <p>3. Մայրենի և օտար լեզուներով հաղորդակցման հնարավորությունների համադրում:</p> <p>Տիրապետումներ՝</p> <p>1. Ունակ լինել ստացած գիտելիքները կիրարկել գրավոր և բանավոր խոսքում:</p>
<p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Հայոց լեզվի ուսուցումն ընթանում է երկու փուլերով. «Նախնական դասընթաց» փուլը սկսվում է գրուսուցմամբ և ներառում է «Կապակցված գրավոր և բանավոր խոսք» ենթաբաժինը, Երկրորդ՝ «Հիմնական դասընթաց» փուլում լեզվական-քերականական իրողություններն ուսուցանվում են ավելի համակարգված ձևով՝ նպաստելով նախնական դասընթացում արդեն ստացած գիտելիքների խորացմանը, հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացմանը:</p>
<p>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ</p> <p>Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի այբուբենի հնչյուն-տառերը, ձևավորել կարդալու և գրելու սկզբնական կարողություններ, հետագայում բանավոր և գրավոր կապակցված խոսք կազմելուն նպաստող շարահյուսական անհրաժեշտ գիտելիքների ուսուցման համար, տեքստային աշխատանքների՝ իրադրական տեքստերի, զրույցների, երկխոսությունների միջոցով մշակել բանավոր խոսքը, աստիճանաբար զարգացնել համագործածական և բժշկագիտական բառապաշարը:</p>
<p>4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է</p> <p>Իմանա՝</p> <p>Ի1. Հայոց լեզվի այբուբենը, հնչյունների գրային նշանները /մեծատառ և փոքրատառ, ձեռագիր և տպագիր/, հայերենի հնչյունական համակարգը ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող օրինաչափությունները:</p> <p>Ի2. Բառերի տեսակներն ըստ կազմության, ձևի և իմաստի, հաղորդակցման համար անհրաժեշտ նվազագույն բառապաշար՝ ա/ ուսումնական գործընթացին առնչվող անհրաժեշտ բառեր, բ/ գործողություն, առարկայի հատկանիշ նշանակող համագործածական բառեր, գ/ կենցաղին, առօրյային վերաբերող համագործածական բառեր:</p> <p>Ի3. Տեքստային աշխատանքների՝ իրադրական տեքստերի, զրույցների, երկխոսությունների միջոցով մշակել բանավոր խոսքը, աստիճանաբար զարգացնել բառապաշարը, ամրապնդել լեզվաքերականական գիտելիքները:</p> <p>Ի4. Թեքվող խոսքի մասերի հարացույցների գլխավոր տարրերը, չթեքվող խոսքի մասերի գործնական կիրառությունը:</p> <p>Ի5. Նախադասության կառուցվածքը, նախադասություն կազմող բառերի կապակցման եղանակները, համառոտ և ընդարձակ, պարզ և բարդ նախադասություններ, նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի /պատմողական, հարցական, հրամայական և բացականչական/, դրանց կետադրությունը, մասնագիտական դասընթացներին վերաբերող հիմնական եզրույթներ ու եզրույթային կապակցություններ, գիտական ոճին հատուկ կառույցներ, լեզվաքերականական իրողություններ:</p> <p>Կարողանա՝</p> <p>Կ1. Լսողությամբ տարբերել հայերենի հնչյունները, երկհնչյունները:</p> <p>Կ2. Ճանաչել բառի բաղադրիչները: Մեծ հաճախականություն ունեցող հոմանիշները, հականիշները գործածել խոսքի մեջ ըստ անհրաժեշտության:</p> <p>Կ3. Ճիշտ կիրառել անվանական և բայական համակարգի թեքված ձևերը, ինքնուրույն կառուցել</p>

կապակցված խոսք:

Կ4. Ընկալել հայոց լեզվի շարահյուսական կառուցվածքը, կազմել փոքրածավալ տեքստեր, համառոտել կարդացած տեքստը, կառուցել իրադրական երկխոսություններ՝ պահպանելով հայերենի շարահյուսական կանոնները:

Կ5. Կարդալ, հասկանալ և վերարտադրել պարզ նախադասություններից կազմված մասնագիտական պարզագույն տեքստեր՝ առանձնացնելով մասնագիտական բառերն ու բառակապակցությունները, դրանցով կազմել նախադասություններ:

Կ6. Տարբեր բնույթի գրավոր աղբյուրներից (բառարան, հանրագիտարան, մամուլ, տեղեկատուներ, համացանց և այլն) անհրաժեշտ տեղեկատվական նյութեր ձեռք բերել և նպակադրված կիրառել:

Տիրապետի՝

S1. Համապատասխան իրավիճակներում ինքնաարտահայտվելուն, նախադասությունները քերականորեն ճիշտ կառուցելուն, թեմայի շուրջ երկխոսություն վարելուն և ճիշտ դիմելաձևերի հմտություններին:

S2. Բառարանից, հանրագիտարանից, տեղեկատու գրականությունից, ինչպես նաև՝ տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու ունակություններին, գիտահանրամատչելի, մասնագիտական գրականություն կարդալու և կարդացածը վերաշարադրելու հմտություններին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամբիոնական մշակումներ
2. V. Gevorgian, East Armenian Course, Yerevan, 2000.
3. Dora Sakayan, Eastern Armenia, For the English Speaking World, YSU Press, 2007:
4. Գուրգեն Գևորգյան, Արտակ Գալստյան, «Անգլերեն-հայերեն առավել գործածական բժշկական բառեր և բառակապակցություններ», Երևան, «Արեգ», 2005թ.:
5. Աստղիկ Ավետիսյան, «Պատկերազարդ հայոց լեզու» (անգլախոս ուսանողների ուսուցման սկզբնափուլ), Երևան, 2004թ.:
6. Լ.Կ. Մուրադյան, «Մովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն», (անգլախոս ուսանողների համար, ուսուցման սկզբնական փուլ), Երևան, 2011թ.:
7. Ա. Շ. Ավետիսյան, «Հայոց լեզու» (Ձեռնարկ անգլախոս ուսանողների համար), Տեքստեր և վարժություններ, Երևան, 2004թ.:
8. «Հայոց լեզու», ԵՊԲՀ Ա.Գ. Ավետիսյանի խմբագրությամբ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴԻԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	14

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԼԱՏԻՆԵՐԵՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	Վիկտորյա Թումանյան, Ժաննա Հակոբյան, Քրիստինա Մեժլումյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 80 06 13, +374 77 04 19 74, +374 77 99 74 71
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	vdoxoyan75@mail.ru , zhanna.mousisyan@mail.ru , Kristina_mezhlumyan@yahoo.com

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	բան.գ.թ. Տաթևիկ Սեդրակի Կարապետյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդ.	Քննություն	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51		51	26	13		+
	II	2	17	2	60	34		34	17	9		+
Ընդամենը		5	34	5	150	85		85	43	22		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, ունակություններն ու կարողությունները

Գիտելիքներ

- անգլերենի բավարար քերականության իմացություն (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն).
- անատոմիական, ստոմատոլոգիական, բառապաշար.
- մայրենի և օտար լեզուներով հաղորդակցում:

Կարողություններ

- հասկանալ և վերլուծել քերականական նյութեր,
- համադրել անգլերեն լեզուն լատիներենի հետ,
- համեմատություններ անցկացնել անգլերենի և լատիներենի միջև,
- ինքնուրույն աշխատանք կատարելու ունակություն և ժամանակի ճիշտ կառավարում,
- բարելավելու կարողություն,
- քննադատական մտածողության, գիտական գրականության ուսումնասիրության կարողություն:

Տիրապետումներ

- սոցիալական հմտություններ,
- մշակութային իրավասություն,

<p>3. թիմային աշխատանք, 4. բանավոր հաղորդակցություն, 5. բարոյական պատասխանատվություն անձի և մյուսների նկատմամբ, 6. դիմացկունություն և հարմարվողականություն:</p>
<p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ Դասընթացը ընդգրկում է անատոմիական, հյուսվածաբանական, դեղագիտական, ախտաբանական և կլինիկական տերմինների ուսուցումը: Դասընթացը հնարավորություն կտա արտասահմանցի ուսանողներին ծանոթանալ անատոմիայում կիրառվող ակտիվ բառապաշարին, ինչպես նաև հունարեն և լատիներեն բիլինգվալ հիմքի վրա ձևավորված ախտաբանական և կլինիկական տերմիններին, որոնք նպաստում են ուսանողների մնացորդային գիտելիքների ձեռք բերմանը, որը հետագայում հնարավորություն է տալիս հմտորեն ծանոթանալ օտարալեզու բժշկական գրականությանը, քանի որ գրեթե ամբողջ եվրոպական/ բացառությամբ գերմաներենի, որոնք առաջնահերթությունը տալիս են սեփական լեզվով ձևավորած տերմիններին, նոր հետո միջազգայինին/ և արևմտյան բժշկական գրականությունը կիրառում է միմիայն հունա-լատինական տերմիններ:</p>
<p>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</p>
<p>3.1. Դասընթացի նպատակը Ուսուցանել հունալատինական անատոմիական, կլինիկական և դեղագիտական, բժշկական տերմինները:</p>
<p>3.2. Դասընթացի խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ծանոթացնել բժշկական տերմինների բառակազմության բովանդակությանը: ▪ Ձևավորել կարողալու, գրելու կարողությունները: ▪ Ուսուցանել նոր բառապաշար՝ հետագայում նեղ մասնագիտական նոր տերմիններ կազմելու համար:
<p>4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է Իմանա՝</p> <p>Ի1. լատիներենի քերականությունը. Ի2. լատինական և հունական նախածանցներն ու վերջածանցները, բառակազմիչ տարրերը. Ի3.լատիներեն (հուներեն) տերմինաբանությունը՝ միջազգային անատոմիական, ստոմատոլոգիական բառապաշարին համաձայն. Ի4. դեղատոմսերի թարգմանություններն ու կրճատումները. Ի5.ախտաբանական, կլինիկական, ստոմատոլոգիական, դեղագիտական տերմինաբանություն:</p> <p>Կարողանա՝</p> <p>Կ1.մասնագիտական գործունեության համար օգտվել ուսումնական, գիտական, հանրամատչելի գրականությունից և համացանցից:</p> <p>Տիրապետի՝</p> <p>S1.լատիներեն տերմինների կազմման հմտություններին, մասնագիտական դասընթացների ուսուցման ընթացքում բժշկական տերմինաբանության կիրառման հմտություններին. S2.բժշկական բառապաշարին և բժշկության մեջ կիրառվող քերականական նրբություններին. S3.օտարերկրյա բժիշկների հետ պրոֆեսիոնալ մակարդակով շփվելու կարողություններին:</p>
<p>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնական մշակումներ 2. Balabanyan V.M., Stepanyan N.S. “Latin manual for first year foreign medical students”, Yerevan, 2008, YSMU after M. Heratsi. 3. Banay G., “An introduction of medical terminology. Greek and Latin derivations”, Worcester. 4. Budzowska M. “Medical Latin Course”, Todz, 2007, www.pbs.org 5. Frantisek Simon, “The history of Latin teeth names”, Slovakia, 2015. 6. Kondratev D., Yylegzanina O., Knyazeva J. “Latin and fundamentals of medical terminology for medical students”, Grodno, 2005, ISBN 985-496-063-3.

7. Katarzyna Joskowska, Zenon Grabarczyk. "Greek and Latin in medical terminology". 2013. ISSN 2300-5432.
8. Առաքելյան Հ.Թ., Բալաբանյան Վ.Մ., Տիրացյան Գ.Գ., Ստեփանյան Ն.Ս. «Լատիներեն լեզու և բժշկական տերմինաբանություն» Երևան, 2008, ISBN 978-99941-40-59-6.
9. Чернявский М. Н. «Латинский язык и основы медицинской терминологии». МОСКВ, 2007.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ		ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ		16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում		70
Ինքնուրույն անհատական աշխատանք		14
7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՕՏԱՐ ԼԵԶՈՒ, ԱՆԳԼԵՐԵՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	բան.գ.թ. Տաթևիկ Կարապետյան բան.գ.թ. Տաթևիկ Սիմոնյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 93 77 25 99, +374 94 11 30 90
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	karapetyants@yahoo.com , tatevsimonyan85@mail.ru

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	բան.գ.թ. Տաթևիկ Սեդրակի Կարապետյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհուրդ.	Քննություն	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51	-	51	25	14		+
	II	2	17	2	60	34	-	34	17	9		+
Ընդամենը		5	34	5	150	85	-	85	42	23		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, ունակություններն ու կարողությունները, որոնք ձևավորվել են դպրոցական ծրագրի շնորհիվ՝

Գիտելիքներ՝

- անգլերենի բավարար իմացություն,
- մայրենի և օտար լեզուների բառապաշարային, կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների ընկալում,
- մայրենի և օտար լեզուներով հաղորդակցման հնարավորությունների համադրում:

Կարողություններ՝

- հասկանալ և վերլուծել քերականական նյութեր մայրենի լեզվով,
- համադրել մայրենի լեզուն անգլերենի հետ,
- համեմատություններ անցկացնել մայրենի լեզվի և անգլերենի միջև,
- անգլերենով բանավոր և գրավոր խոսքի ազատ հաղորդակցում,
- ինքնուրույն աշխատանք կատարելու ունակություն և ժամանակի ճիշտ կառավարում,
- բարելավելու կարողություն,
- քննադատական մտածողության, պատճառաբանության, գիտական գրականության ուսումնասիրության կարողություն:

Տիրապետումներ՝

- սոցիալական հմտություններ,
- մշակութային իրավասություն,
- թիմային աշխատանք,

<p>4. բանավոր հաղորդակցություն,</p> <p>5. բարոյական պատասխանատվություն անձի և մյուսների նկատմամբ,</p> <p>6. դիմացկունություն և հարմարվողականություն:</p>
<p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Դասընթացը միտված է ապագա բժիշկների հումանիտար մտածողության ձևավորմանը, որի արդյունքում լեզվից դուրս ուսանողները կարող են տարբերակել հիվանդի վարքագիծը և ռեակցիաները, ձևավորել և ամրապնդել համատեղ աշխատանքը ապագա գործընկերների հետ բժշկական թիմում, մասնավորապես՝ բանավոր ներկայացումների և գիտահետազոտական աշխատանքների ծավալում (ներկայացնել և/կամ հրատարակել գիտահետազոտական արդյունքներ), միջմշակութային իրազեկում և հաղորդակցություն (հիվանդների հետ հաղորդակցություն):</p>
<p>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</p>
<p>3.1. Դասընթացի նպատակը</p> <p>Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների բանավոր խոսքի կարողությունը, խորացնել քերականական գիտելիքները, հարստացնել բառապաշարը, զարգացնել խոսելու և լսելու, մասնագիտական տերմիններն ու տերմինաբանական կապակցությունները ճշգրտորեն ընտրելու և կիրառելու հմտությունները, մասնագիտական մատչելի տեքստեր վերլուծելու և վերարտադրելու կարողությունները:</p>
<p>3.2. Դասընթացի խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> ▪ ուսանողների հետ վարել անգլերենի բանավոր խոսքի տիրապետմանն ուղղված տարաբնույթ աշխատանքներ՝ կատարելագործելով բանավոր խոսքի ճշգրտությունն ու հստակությունը, ▪ թեմատիկ աուդիո և վիդեո նյութերի միջոցով զարգացնել ուսանողների լսելու կարողությունը, ▪ բարելավել կարդալու հմտությունը, ▪ գործնականում ամրապնդել լեզվի քերականության իմացությունը:
<p>4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է</p>
<p>Իմանա՝</p> <p>Ի1. ընդհանուր և մասնագիտական հիմնական բառակազմական կադապարները .</p> <p>Ի2. խոսքի մասերը, նախադասության անդամները, պարզ և բարդ նախադասությունների շարահյուսությունը</p> <p>Ի3. բժիշկ-հիվանդ և բժիշկ-գործընկերներ հաղորդակցության հմտությունները,</p> <p>Կարողանա՝</p> <p>Կ1. թարգմանել, վերարտադրել հատուկ բժշկական տեքստեր բառարանով և առանց բառարանի .</p> <p>Կ2. փոխանցել անգլերեն տեքստերի ընդհանուր բովանդակությունը .</p> <p>Կ3. վարել կենցաղային և մասնագիտական զրույցներ .</p> <p>Կ4. գրել անձնական և գործնական նամակներ .</p> <p>Կ5. կազմել ճիշտ խոսք (բանավոր, գրավոր)՝ հետևելով խոսքի կուլտուրայի կանոններին .</p> <p>Կ6. կողմնորոշվել սոցիալ-մշակութային հաղորդակցության տարբեր իրավիճակներում:</p> <p>Տիրապետի՝</p> <p>Տ1. անգլերեն լեզվին՝ որպես միջմշակութային հաղորդակցության միջոցի .</p> <p>Տ2. մասնագիտական և ոչ տեխնիկական բառապաշարին .</p> <p>Տ3. մասնագիտական բանավոր և գրավոր խոսքին և դրանց նրբություններին:</p>
<p>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <p>1. Ամբիոնական մշակումներ</p> <p>2. MacCarter S., Oxford English for Careers: Medicine 1, ISBN: 978-0-19-402300-9, 2013.</p> <p>3. MacCarter S., Oxford English for Careers: Medicine 2, ISBN: 978-0-19-456956-9, 2014.</p> <p>4. Demchenko, N.M. Romanko, I.G., “English for Dental Specialist”, Poltava, 2012.</p> <p>5. Thomson A., Martinet A. “A Practical English Grammar”, oxford University Press</p>

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴԴՐԻՉՆԵՐ		ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ		16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում		70
Ինքնուրույն անհատական աշխատանք		14
7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոնատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոնատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	Բ.գ.թ. Դոնարա Կարապետյան, Լիլիթ Սուքիասյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 42 34 77, +374 91 36 38 16
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՅԵ	Lilit.sukiasyan@inbox.ru

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	բան.գ.թ. Տաթևիկ Սեդրակի Կարապետյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդ.	Քննություն	Ստուգարք
I	II	3	17	3	90	51	34	17	26	13		+
Ընդամենը		3	17	3	90	51	34	17	26	13		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, ունակություններն ու կարողությունները

Գիտելիքներ՝

- կենսաբանության գիտության ականավոր հայտնագործությունները, կենսաբանական գիտության դերը աշխարհի արդիական բնագիտական պատկերի ձևավորման մեջ.
- մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների պետության կառուցվածքի, տեսակների, կառավարման ձևերի մասին:

Կարողություններ՝

- վերլուծել կենսաբանական երևույթները և բնական գործընթացների օրինաչափությունները.
- տարբերակել մարդկային հասարակության զարգացման բնորոշ առանձնահատկությունները տարբեր ժամանակաշրջաններում:

Տիրապետումներ՝

- աշխատել կենսաբանական գրականության, դասախոսությունների սեղմագրերի հետ:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բժշկության պատմություն» դասընթացը ուսումնասիրում է բժշկության պատմական զարգացման փուլերը, տարբեր դարաշրջաններում հաճախ հանդիպող հիվանդությունները, բժշկության զարգացման առանձնահատկությունները՝ կախված կրոնական նկատառումներից և տարածաշրջանից:

<p>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</p> <p>3.1. Դասընթացի նպատակը Դասընթացի նպատակն է բարձրացնել ուսանողի ընդհանուր և մասնագիտական գիտելիքների մակարդակը՝ կատարելով շատ կարևոր դեր ապագա բժշկի պատրաստման գործում, սովորեցնելով բժշկության պատմությունը, օգնել ուսանողներին մուտք գործել մասնագիտական աշխարհ:</p> <p>3.2. Դասընթացի խնդիրները</p> <ol style="list-style-type: none"> 1. Դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում ուսումնասիրել աշխարհի բոլոր ժողովրդների բժշկության պատմությունը՝ սկսած նախնադարից մինչև մեր օրերը: 2. Ծանոթացնել կարևորագույն համաշխարհային բժշկական դպրոցների գործունեությանը: 3. Ուսուցանելով կարևորագույն բժիշկ-հումանիստների Հիպոկրատի, Գալենի, Իբն Սինայի, առազգիի, Միլիթար Հերացու, Ամիրդովլաթ Ամասիացու և ուրիշների բարոյաէթիկական սկզբունքներն նպաստով երիտասարդ բժշկի բարոյանակ կերպարի կայացմանը և կատարելագործմանը:

<p>4.ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է</p> <p>Իմանա՝</p> <p>Ի1. բժշկության անցած երկար ճանապարհը սկսած նախնադարից մինչև մեր օրերը, բժշկական համակարգերի և բժշկական դպրոցների պատմությունը, դրանց հիմնադիրները, հայկական բժշկության զարգացումը և ծաղկունքի շրջանները, հայ հայտնի բժիշկների կյանքը, վերջիններիս դերը համաշխարհային բժշկագիտության զարգացման գործում,</p> <p>Կարողանա՝</p> <p>Կ1.մասնագիտական գործունեության համար օգտվի ուսումնական, գիտական, հանրամատչելի գրականությունից և համացանցից,</p> <p>Կ2.բժշկության պատմությանը վերաբերող գիտական քննարկումների ժամանակ ցուցաբերել գրագետ մոտեցում պրակտիկ բժշկի գործունեությունում,</p> <p>Կ3.հիվանդների հետ շփվելիս, օգտագործի գիտելիքները բժշկության պատմությունից, բժշկական էթիկայից և մշակույթից, որոնք ձեռք է բերել ուսումնառության ընթացքում,</p> <p>Տիրապետի՝</p> <p>Տ1. սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններին</p>

<p>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնական մշակումներ 2. Հայաստանի Բժշկության Պատմություն, դասագիրք/ Ս. Վարդանյան, Երևան, 2000; 3. Բժշկության Պատմություն, դասագիրք/ Յ. Լիսիցին, Մոսկվա, 2015. 4. Աբուսայիդ.Յաղագս կազմութեան մարդոյ,քննական բնագիրը,ռուսերեն թարգմանությունը և առաջաբանը Ս.Վարդանյանի,Երևան,1974 5. Ամիրդովլաթ Ամասիացի.Անգիտաց անպէտ,խմբ. Կ. Բասմաջյանի,Վիեննա,1926: 6. Ասար Սեբաստիացի.Գիրք բժշկական արհեստի,աշխ. Դ.Կարապետյանի, Երևան, 1993: 7. Գրիգոր Նարեկացի. Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն,քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ստելլա վարդանյանի, Էջմիածին, 2008: 8. Гипократ. Избранные книги, Москва, 1936, 9. Иба Сина. Канон врачебной науки в 5 томах, Ташкент, 10. Porter Roy. The Greatest benefit to Mankind. A Medical History of Humanity, New York, London,1998, 11. Singer Ch., Underwood A. A short History of medicine, Oxford, 1962
--

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴԴԻՉՆԵՐ		ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ		16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում		70
Ինքնուրույն անհատական աշխատանք		14
7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան, պ.գ.թ., դոցենտ Մարինե Գևորգյան
ՀԵՌԱՌՈՍ	+374 91 20 15 05, +374 91 30 30 53
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՅԵ	armen@fulbrightmail.org , manan21@mail.ru

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	բան.գ.թ., Տաթևիկ Սեդրակի Կարապետյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51	34	17	26	13		+
Ընդամենը		3	17	3	90	51	34	17	26	13		

ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, ունակություններն ու կարողությունները:

Գիտելիքներ

- մարդկային հասարակության վերընթաց զարգացման գործընթացի վերաբերյալ պատկերացումներ.
- երկրագնդի բնակլիմայական պայմանների, օգտակար հանածոների, բուսական և կենդանական աշխարհի մասին.
- ընդհանուր պատկերացում աշխարհի քաղաքական քարտեզի, երկրների և պետությունների տեղակայման վերաբերյալ.
- նախնական գիտելիքներ կրոնների մասին.
- նախնական գիտելիքներ ժամանակը հաշվելու և տոմարի մասին:

Կարողություններ

- վերլուծել պատմական երևույթները, հասկանալ ու տարբերակել դրանց պատճառները, առիթը, հետևանքները.
- կարողանալ բանավոր և քարտեզի վրա ներկայացնել կոնկրետ երկրի/պետության տեղը և դիրքը, նրա հարևան երկրները.
- տարբերակել մարդկային հասարակության աստիճանական զարգացման գործընթացի օրինաչափությունները և ընդհանուր միտումները.

4. դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում .
5. դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, սոցիալական կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից .
6. արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:

Տիրապետում՝

1. ունակ լինել հասկանալու պատմական աղբյուրների հաղորդած տեղեկությունների արժանահավատության աստիճանը, աշխատել պատմագիտական գրականության, դասախոսությունների սեղմագրերի հետ, ինչպես նաև աշխատել գործնական պարապմունքների տեսական մասի հետ .
2. ունակ լինել քննարկել արդի աշխարհի հետ բազմատեսակ կապերը, աշխարհաքաղաքական արդի զարգացումների համատեքստում ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, անի կանխատեսումներ դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ .
3. բացատրի հասարակության զարգացման հաջորդական աստիճաններից յուրաքանչյուրի առանձնահատկությունները և առավել բնորոշ գծերը .
4. աշխատել պատմական և քաղաքական քարտեզների հետ .
5. կապեր գտնի արդի և պատմական գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը .
6. օգտագործի քարտեզներ, ուսումնասօժանողական գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ .
7. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայոց պատմություն» դասընթացն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալ իրադարձություններով և մշակութային նվաճումներով հարուստ մեր երկրի պատմությանը, ճանաչել մեր ժողովրդի ավանդույթները, բարքերն ու սովորույթները:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Դասընթացի նպատակը

Ուսանողներին ծանոթացնել Հայոց հին հազարամյա պատմությանը, ցույց տալ, որ հայ ժողովուրդը հանդիսացել է համաշխարհային քաղաքակրթության ձևավորման հիմնական և ակտիվ մասնակիցներից մեկը և իր որոշակի ավանդն է ներդրել համամարդկային մշակույթի գանձարանը:

3.2. Դասընթացի խնդիրները

- Հայ ժողովրդի պատմությունից տալ գիտելիքի անհրաժեշտ նվազագույն պաշարը,
- Հայ ժողովրդի պատմությունը ներկայացնել ապահովելով կապը Համաշխարհայի պատմության համապատասխան իրադարձությունների և ընթացքի հետ

4. ԿՐԹԱՎԱՆ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա՝

- Ի1.** Հայաստանի և նրա հարևան երկրների տեղը քարտեզի վրա, հայ ժողովրդի ազգածագման մասին առկա ավանդազրույցները, 1-ին համահայկական Վանի թագավորության պատմության իրադարձությունները, արքաներին և նրանց ձեռնարկները:
- Ի2.** Երվանդունի և Արտաշեսյան արքայատան հայոց արքաներին, նրանց ձեռնարկումները հայոց պետականությունն ամրապնդելու գործում, հայ-մարական, հայ-իրանական, հայ-հռոմեական հարաբերությունները, արքայատների անկման արտաքին և ներքին պատճառների և հետևանքների մասին:
- Ի3.** Արշակունյաց արքայատան՝ Հայաստանում հաստատվելու ընթացքը, քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման կարևորությունը, հայկական մշակույթի շրջադարձը դեպի քրիստոնեական աշխարհ, հայոց այբուբենի ստեղծումը և 5-րդ դարի հայ ոսկեդարը, պետականության անկման պատճառներն ու հետևանքները:
- Ի4.** Հայ ազատագրական շարժումները 5-րդ դարում, Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումը, արաբական արշավանքներն ու հայերի հակաարաբական ապստամբությունները, հայոց էպոսը, նոր պետականության վերականգնման նախադրյալները:
- Ի5.** Բագրատունյաց արքայատոհմի գլխավորությամբ պետականության վերականգնումը, Բագրատունի արքաների ձեռնարկները, հայ-արաբական, հայ-բյուզանդական հարաբերությունները, Կիլիկիայի տեղադրությունը, այնտեղ հայոց պետականության հաստատումն ու անկումը:
- Ի6.** Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում, Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, ռուսահայ և հնդկահայ կենտրոնների գործունեությունը: 19-րդ դարի միջազգային դրությունը՝ ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմներն ու Հայաստանի դրությունը, Հայկական հարցի միջազգայնացումը, հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ազատագրական պայքարը արդուլիամիդյան վարչակարգի դեմ 19-րդ դարավերջին:
- Ի7.** Հայ ազատագրական շարժումը 20-րդ դարի սկզբին: Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում: Երիտթուրքական հեղաշրջումը: Հայկական հարցը 1912-1914 թթ., Առաջին աշխարհամարտը և Հայոց մեծ եղեռնը, ռուսական հեղափոխությունները 1917թ., մայիսյան հերոսամարտերն ու Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը:
- Ի8.** Առաջին հանրապետության անկումը: Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները, ռուս-թուրքական 1921 թ. պայմանագրերի ազդեցությունը Հայոց պատմության վրա, Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ աշխարհամարտին, Արցախյան շարժման սկիզբն ու ծավալումը 1988-1991 թթ: ՀՀ և ԼՂՀ հռչակումը: Ադրբեջանի հակահայկական ագրեսիան և արցախյան պատերազմի հետագա ընթացքը 1991-1994 թթ: Հիմնախնդրի ներկայիս կարգավիճակը: Հայրենիք-սփյուռք առնչությունները 1920-1990-ական թթ.:

Կարողանա՝

- Կ1.** տարբերակել հայ հասարակության և պետության զարգացման փուլերը, հասկանա առավել կարևոր պատմական իրադարձությունների պատճառները և հետևանքները .
- Կ2.** օգտվել աղբյուրներից, վերլուծել դրանց հաղորդած տեղեկությունները և անել եզրահանգումները
- Կ3.** բանավոր, գրավոր և սահիկաշարերի ներկայացման ձևով արտահայտել իր մտքերը, ձևավորել սեփական կարծիք պատմական իրադարձությունների վերաբերյալ, ներկայացնել փաստեր և այլ ապացույցներ իր կարծիքը հաստատելու համար .
- Կ4.** օգտվել ուսումնական, գիտական, հանրամատչելի գրականությունից և համացանցից:

Տիրապետի՝

- S1.** Հայոց պատմության առանցքային փաստերին և դրանց ժամանակագրությանը,
- S2.** պատմական դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ իր մտքերը շարադրելու և կարծիք հայտնելու հմտությանը .
- S3.** պատմական իրադարձությունների պատճառները վերլուծելու և դրանց հետևանքները գնահատելու հմտություններին .
- S4.** ներկայիս քաղաքական գործընթացները հասկանալու հմտություններին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամբիոնական մշակումներ
2. Մ. Գևորգյանի դասախոսությունների փաթեթը:
3. Հայոց պատմություն, իմբ.՝ Հր. Սիմոնյան, Եր., 2012-
www.armin.am/historyofarmenia/images/menus/728/HJP.pdf
4. Ժամկոչյան Հ., Մելիք-Բախշյան, Հայ ժողովրդի պատմություն, Եր. 1975-
<http://www.armin.am/historyofarmenia/images/menus/904/Jamkochyan.pdf>
5. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Եր., 1995-
www.armin.am/historyofarmenia/images/menus/273/Haykakan%20harc.pdf
6. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2013
http://www.armin.am/historyofarmenia/images/menus/1205/hayastani_errord_hanr.pdf
7. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա , Երևան, 2007-
www.armin.am/historyofarmenia/images/menus/373/Qristomatia1.pdf
8. Հարությունյան Կ, Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ աշխարամարտին, Երևան, 2001-
www.armin.am/historyofarmenia/images/menus/286/HH_Simon%20Vracyan.pdf
http://www.armin.am/historyofarmenia/images/menus/1250/Harutyunyan_K2.pdf
9. Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Երևան, 1964-
www.armin.am/historyofarmenia/images/menus/278/Turqian%20ev%20nra%20Nvachoxakan%20qaxaqak%20anutyun@%20Andrrkovkasum.pdf
10. Սիմոնյան Հր. Ռ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա-Բ, Երևան, 2009-
<http://www.armin.am/historyofarmenia/images/menus/775/Hrachik%20Simonyan.pdf>
11. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993-
www.armin.am/historyofarmenia/images/menus/286/HH_Simon%20Vracyan.pdf

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	14

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստումատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստումատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	հ.գ.թ. Աննա Օվչյան, հ.գ.թ., Դոցենտ Մարիանա Ավետիսյան,
ՀԵՌԱԽՈՍ	+374 93 10 88 78, +374 94 60 94 96
ԷԼ.ՓՈՍՏ	aovchyan@inbox.ru , mariana_avetisyan@yahoo.com .

ԱՄԲԻՈՆ	Սոցիալական բժշկության
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	հ.գ.թ. Աննա Օվչյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. Շաբաթ	Շաբաթակ. Ժամ	Ընդհանուր Ժամ	Ընդամ. Լ.ս. Ժամ	Դասախ. Ժամ	Գործն., լաբ. Ժամ	Ինքն. Աշխ. Ժամ	Դասախոսի խորհրդատ	Քննություն	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51	34	17	26	13		+
Ընդամենը		3	17	3	90	51	34	17	26	13		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, ունակություններն ու կարողությունները՝

Գիտելիքներ

1. մարդու օրգանների, օրգան-համակարգերի, նյարդային համակարգի գործունեության մասին:
2. հասարակության և անհատի միջև փոխհարաբերությունների մասին:

Կարողություններ

1. աշխատել ուսումնական գրականության, դասախոսությունների հետ, ինչպես նաև տիրապետել տեսական նյութը գործնական պարապմունքներին կիրառելու կարողությանը:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր հոգեբանությունը ուսումնասիրում է մարդու հոգեկանը, հոգեկանի գործընթացներն ու վիճակները, անձի առանձնահատկությունները, գիտակցությունը, ինչպես նաև այն, թե ինչպես են առաջանում և ձևավորվում իմացական գործընթացները՝ զգայություններ, ընկալում, հիշողություն, մտածողություն, լեզու և խոսք, խառնվածք, բնավորություն, ընդունակություններ, մոտիվացիա, հույզեր և ուշադրություն:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

3.1. Դասընթացի նպատակը

Դասընթացի տիրապետման հիմնական նպատակն է ստեղծել ուսանողների մոտ մնայուն և խորը գիտելիքներ, որոնց հիման վրա ուսանողները կկարողանան

1. Բացատրել հոգեբանական գիտության դերը:
2. Բացատրել իմացական գործընթացների, հոգեկան վիճակների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներն ու օրինաչափությունները:
3. Բացատրել սոցիալական և կենսաբանական գործունեության դերը անձի զարգացման գործընթացում:

3.2. Դասընթացի խնդիրները

1. Հոգեբանական գիտության տեսագործնական հիմունքների իմացության ձևավորումը:
2. Իմացական գործընթացների, հոգեկան վիճակների, անձնային հատկությունների զարգացման մեխանիզմների և օրինաչափությունների իմացության ձևավորումը:
3. Տեսական, գործնական գիտելիքները բանավոր և գրավոր խոսքով ներկայացնելու կարողության զարգացում:
4. Ինքնուրույն աշխատելու, հոգեբանական գիտելիքները պրակտիկայում կիրառելու կարողության զարգացում:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՁԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է Իմանա՝

- Ի1.** Հոգեբանության ուսումնասիրման առարկան, խնդիրներն ու մեթոդները:
Ի2. Հոգեկանի կապը նյարդային համակարգի գործունեության հետ: Հոգեկան գործընթացներն ու վիճակները:
Ի3. Անձի հոգեբանական առանձնահատկություններն ու դրանց դրսևորումները:
Կարողանա՝
Կ1. Նկարագրել և բացատրել հոգեկան գործընթացների, երևույթների օրինաչափություններն ու մեխանիզմները:
Կ2. Կիրառել հոգեբանական գիտելիքները դեպքի, իրավիճակի հոգեբանական վերլուծություն կատարելիս:
Կ3. Ուսումնասիրել և վերլուծել հոգեբանական գիտական գրականություն:
Տիրապետի՝
Տ1. Հոգեբանական ինքնակարգավորման և ինքնազարգացման միջոցներին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամբիոնական մշակումներ
2. Հոգեբանության հիմունքներ, Ա. Նալչաջյան, 2016, 672 էջ
3. Психология, Немов Р.С., 4 изд., М.: Гуманит. Изд. центр Владос, 2003, 693 стр.
4. Рубинштейн С.Л., Основы общей психологии, Изд. центр Питер, 2002, 720 стр.
5. Introduction to psychology, James W. Kalat, North Carolina State University, 9-th ed., 2008, 714 p.
6. Psychology / Henry Gleitman, James Gross, Daniel Reisberg, 8-th ed. 2011, 896 p.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	14

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստումատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստումատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	հ.գ.թ. Աննա Օվյան, հ.գ.թ., Դոցենտ Մարիանա Ավետիսյան, բ.գ.թ. Աննա Չիլինգարյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 93 10 88 78, +374 94 60 94 96, +374 98 26 26 90
ԷԼ.ՓՈՍՏ	aovchyan@inbox.ru , mariana_avetisyan@yahoo.com , ani70march@mail.ru

ԱՄԲԻՈՆ	Սոցիալական բժշկության
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	հ.գ.թ. Աննա Օվյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդատ	Քննություն	Մտուցարժ
I	II	2	17	2	60	34	16	18	17	9		+
Ընդամենը		2	17	2	60	34	16	18	17	9		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, ունակություններն ու կարողությունները.

Գիտելիքներ`

- մարդու օրգանների, օրգան-համակարգերի, նյարդային համակարգի կառուցվածքի մասին:
- նյարդային համակարգի և հոգեկանի կապի մասին:
- հոգեկանի իմացական գործընթացների մասին:
- անձի հոգեբանական կառուցվածքը:

Կարողություններ`

- Հոգեկան գործունեության ֆիզիոլոգիական մեխանիզմները բացատրելը:
- Մարդու կյանքի և գործունեության համար իմացական գործընթացների դերի ճանաչելն ու զարգացնելը:
- Անձի հոգեբանական առանձնահատկություններն ու դրանց դրսևորումները ճանաչելն ու տարբերակելը:

Տիրապետումներ`

- աշխատել հոգեբանական գրականության, դասախոսությունների սեղմագրերի հետ, գործնական պարապմունքների տեսական մասի հետ:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բժշկական հոգեբանություն» առարկան ուսումնասիրում է հոգեբանության հետ առնչվող բժշկության տեսագործական, հիվանդության կանխարգելման, ախտորոշման և բուժման ընթացքում ծագող մարդու հոգեկան առողջության հետ կապված հիմնախնդիրները:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

3.1. Դասընթացի նպատակը

- 1.Ցուցաբերել մասնագիտական էթիկակայի նորմերին ու կանոններին համապատասխան վարք:
- 2.Տարբերակել մարդու հոգեկանի նորման և պաթոլոգիան:
- 3.Բացատրել հոգեմարմնական խանգարումների պատճառահետևանքային կապերը:
- 4.Բացատրել հիվանդության աղդեցությունը անձի սոցիալական ադապտացիայի, աշխատունակության, հոգեկան առողջության վրա:

3.2. Դասընթացի խնդիրները

1. Բժշկական էթիկական նորմերից բխող՝ մասնագիտական վարքի և հաղորդակցման կարողության ձևավորում:
2. Հոգեմարմնական խանգարումների պատճառահետևանքային կապերի իմացության, տեսական գիտելիքներին համարժեք՝ պրակտիկ կարողությունների ձևավորում:
3. Մարդու հոգեկանի դրսևորումները՝ հիվանդության ախտորոշման, բուժման ընթացքում ճանաչելու կարողության ձևավորում:
4. Ջարգացման ընթացքում հնարավոր խանգարումների պատճառահետևանքային կապերի իմացության ձևավորում:
5. Անձնային, վարքային, տագնապային, տրամադրության խանգարումները ճանաչելու և բնութագրելու կարողության ձևավորում:

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

Իմանա՝

Ի1.Բժշկի մասնագիտական գործունեության հոգեբանական ասպեկտները, բժշկական դեոնթոլոգիայի սկզբունքները:

Ի2.Մարդու հոգեկան և ֆիզիկական առողջության փոխկապվածությունը, պատճառահետևանքային կապերը:

Ի3. Մարդու հոգեկանի գործունեության նորման և պաթոլոգիան:

Կարողանա՝

Կ1. Տարբերակել և վերլուծել հոգեկանի գործունեության նորման և պաթոլոգիան:

Կ2.Մարդու հոգեկան և ֆիզիկական առողջության փոխազդեցության վերաբերյալ գիտելիքները կիրառել կլինիկական դեպքերի մասնագիտական վերլուծություններում:

Կ3.Ճանաչել զարգացման ընթացքում առաջացող շեղումները և մշակել դեպքին համարժեք մասնագիտական ռազմավարություն:

Կ4.Կարողանա գնահատել խնդրահարույց իրավիճակները, համարժեք ռազմավարություն մշակել և արտահայտել սեփական դիրքորոշումը՝ ելնելով հոգեբանական սկզբունքներից:

Տիրապետի՝

Տ 1. Կլինիկական դեպքերի վերլուծման կարողությանը:

Տ 2. Հոգեբանական ինքնակարգավորման և ինքնազարգացման միջոցներին:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամբիոնական մշակումներ
2. Բժշկական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, 341 էջ
3. Прикладная клиническая психология: учебное пособие, В.А. Кулганов, В.Г. Белов, Ю.А. Парфёнов, СПб.: СПбГИПСП, 2012, 444 с.
4. Психосоматика и психология здоровья: Учеб. пособие. 2-е изд., перераб. и доп., Ю.Г. Фролова, Мн.: ЕГУ, 2003, 172 с.
5. Первичная профилактика психосоматических заболеваний с помощью системы психологических технологий, И. А. Фурманов [и др.]; под ред. И. А. Фурманова, М-во образования РБ, Гом. гос. ун-т им. Ф. Скорины. Гомель: ГГУ им. Ф. Скорины, 2015, 221 с.
6. Биоэтика : учебник и практикум для вузов / Е. В. Ушаков, М. : Издательство Юрайт, 2016, 306 с.
7. The Oxford Handbook of Clinical Psychology, David H. Barlow, Oxford University Press, 2014, 977 p.

8. Clinical Psychology, Eighth Edition Timothy J. Trull and Mitchell J. Prinstein, University of Missouri–Columbia, University of North Carolina, 609 p.
9. Abnormal psychology, second edition, Deborah C. Beidel, Cynthia M. Bulik, Melinda A. Stanley, University of Central Florida, University of North Carolina, Baylor College of Medicine, 212, 678 p.
10. Health psychology, Arthur M. Nezu, Christine Maguth, Nezu Pamela A. Geller, Irving B. Weiner, John Wiley & Sons Inc., 2003, 691 p.

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ		ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ		16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում		70
Ինքնուրույն անհատական աշխատանք		14
7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«զերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՓԻԼԻՍՈՓՍՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստումատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստումատոլոգիական		
ԿՈՒՐՍ	II	ԿԻՍԱՄՅԱԿ	IV
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	Հայարփի Սահակյան, Գևորգ Հակոբյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 94 69 24 64, +374 94 50 33 55
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	hayarpisahakyan@yandex.ru , gevorg.hakobyan82@gmail.com

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	բան.գ.թ. Տաթևիկ Սեդարակի Կարապետյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասակ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Ստուգաթիվ
II	IV	2	15	3	60	45	34	11	9	6		+
Ընդամենը		2	15	3	60	45	34	11	9	6		

1. ՆԱԽԱՊԱՑՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, կարողությունները և տիրապետումները
- Գիտելիքներ**
2. համաշխարհային պատմության էական ու նշանակալի դեպքերի վերաբերյալ.
 3. լեզվական գիտելիքներ՝ կարդալու, վերարտադրելու, դասախոսություն ունկնդրելու և հասկանալու մակարդակում.
 4. գիտելիքներ՝ բնագիտական և մաթեմատիկական գիտակարգերում առկա հիմնարար տեսությունների վերաբերյալ:
- Կարողություններ**
8. վերլուծել պատմական և կենսաբանական երևույթները, բնական և հասարակական գործընթացների օրինաչափությունները.
 9. լուծել մաթեմատիկական և բնագիտական խնդիրներ.
 10. բացատրել պատմական նշանակալի դեպքերը և դրանց հնարավոր ազդեցությունները անձի և հասարակության վրա:
- Տիրապետումներ**
1. ունակ լինել՝ լսել, կարդալ և ըմբռնել, իմաստավորել ու վերաիմաստավորել դասախոսություններով և մասնագիտական գրականությամբ մատուցված ակադեմիական նյութերը.
 2. դասախոսի ուղորդմամբ՝ համադրել առկա և ստացվող գիտելիքները, դրանք շաղկապել

<p>տրամաբանական կանոնավորությամբ, կատարել եզրահանգումներ, հիմնավորել կատարված եզրահանգումները.</p> <p>3. արժեքավորել առկա և ստացվող գիտելիքը, տեսնել այն բացերը, որոնք առկա են փիլիսոփայական գիտելիքի բացակայության դեպքում:</p>	
<p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>«Փիլիսոփայություն» դասընթացը ուսումնասիրում է փիլիսոփայական գիտելիքի առանձնահատկությունները, փիլիսոփայության գլխավոր խնդիրը, զարգացման փուլերը, հիմնական բաժինների գլխավոր խնդիրները, վերջիններիս վերաբերյալ հիմնական տեսակետները:</p>	
<p>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</p> <p>3.1. Դասընթացի նպատակը</p> <p>Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մշակույթում փիլիսոփայության ունեցած դերին, զարգաման պատմական փուլերին, փիլիսոփայական գլխավոր խնդիրների շուրջ առաջադրված հիմնական տեսակետներին:</p> <p>3.2. Դասընթացի խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> ▪ Գոյության, իմացության, մեթոդի, գիտական և ոչ գիտական գիտելիքի դեմարկացիան: ▪ Հսարական, իրավական, քաղաքական, տնտեսական ոլորտների ունիվերսալ և փոխկապակցված հիմնախնդիրները բարելավել կարդալու հմտությունը, ▪ գործնականում ամրապնդել լեզվի քերականության իմացությունը: 	
<p>4. ԿՐԹՎԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է Իմանա՝</p> <p>Ի1. փիլիսոփայական գիտելիքի առանձնահատկությունները, Ի2. փիլիսոփայության հիմնական բաժինները և դրանց խնդրադաշտի սահմանները, Ի3. փիլիսոփայության գլխավոր խնդիրները, վերջիններիս վերաբերյալ հիմնական տեսակետները: Ի4. փիլիսոփայության զարգացման փուլերը, հիմնական դպրոցները, ուղղությունները, ճյուղերը, Ի5. համաշխարհային փիլիսոփայության ամենանշանակալի դեմքերի հիմնական գաղափարները:</p> <p>Կարողանա՝</p> <p>Կ1. փիլիսոփայական մոտեցում ցուցաբերել ցանկացած հայեցակետի նկատմամբ, Կ2. տարբերել փիլիսոփայական հիմնական ուղղությունները, հիմնախնդիրները, լուծումները, Կ3. կյանքում և մասնագիտական գործունեության շրջանակներում կիրառել փիլիսոփայության ընձեռած հնարավորությունները:</p> <p>Տիրապետի՝</p> <p>S1. փիլիսոփայական խնդրադաշտին, S2. փիլիսոփայական-մեթոդաբանական հնարներին, S3. փիլիսոփայական վերլուծության արդյունքում՝ կատարի եզրակացություններ, դրանք արժեքավորի և հիմնավորի:</p>	
<p>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնական մշակումներ 2. Solomon R.C., Higgins K.M., The Big Questions. A Short Introduction to Philosophy. Ninth Edition, Wadsworth, Cengage Learning, 2014 3. Ասատրյան Վ. Ս., Փիլիսոփայության ներածություն (ուսումնական ձեռնարկ), Եր, նոյան Տապան, 2001 4. Фролов И. Т. и др Введение в философию: Учеб. пособие для вузов, 3-е изд., перераб. и доп. - М.: Республика, 2003 	
6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	14

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տարային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՍՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	Լիա Մարտիրոսյան Ֆիզ. մաթ. գ. թ., Արմեն Գրիգորյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 55 43 33 56, +374 55 31 35 45
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	lia.mart70@gmail.com , armeng9@gmail.com

ԱՄԲԻՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՆՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.թ., Հ. Գ. Ջավրուշյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընթաց. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դաս ախտախորհրդով.	Քննություն	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51	18	33	25	14		+
	II	2	17	2	60	34	16	18	17	9		+
Ընդամենը		5	34	5	150	85	34	51	42	23		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են գիտելիքներ, ունակություններ ու կարողություններ
- Գիտելիքներ՝**
- գծային, քառակուսային հավասարումների,
 - հանրահաշվական բանաձևերի,
 - հանրահաշվական արտահայտությունների ձևափոխությունների,
 - տարրական ֆունկցիաների,
 - սկզբնական հասկացություններ ֆունկցիայի սահմանի, ածանցյալի,
 - եռանկյունաչափական ֆունկցիաների, բանաձևերի,
 - նախնական գիտելիքներ համակարգչի և “MS Office” ծրագրերի մասին:
- Կարողություններ՝**
- տարբերել կախյալ և անկախ փոփոխականները, տարրական ֆունկցիաների տեսակները,
 - կատարել հանրահաշվական արտահայտությունների ձևափոխություններ,
 - կիրառել եռանկյունաչափական բանաձևեր,
 - կառուցել տարրական ֆունկցիաների գրաֆիկներ,
 - ունենալ ինտերնետում աշխատելու և “MS Office” ծրագրերից օգտվելու հմտություններ:
- Տիրապետումներ՝**
- Օգտվել տարատեսակ աղբյուրներից՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար, աշխատել մասնագիտական գրականության հետ:
 - Աշխատել թիմում՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը, ղեկավարվելով ազգային և համամարդկային արժեքներով:

<p>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Առանց «Մաթեմատիկայի» անհնար է ուսումնասիրել մյուս գիտությունները: Մաթեմատիկայի գաղափարները, դատողություններն ու օրինաչափությունները ծառայում են որպես լեզու. նրանով գրում, խոսում և մտածում են մյուս գիտությունները: Այն բացատրում է դժվարին երևույթների օրինաչափությունները, ուսումնասիրում և մեծ ճշգրտությամբ նկարագրում է երևույթների ընթացքը: «Բժշկական ինֆորմատիկան» օգնում է ձևավորել համակարգչային գիտելիքներ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և տիրապետման, ինֆորմացիայի ստացման և մշակման համար, այդ թվում նաև առողջապահության ոլորտում:</p>
<p>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ</p> <p>Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ հիմնական մաթեմատիկական գիտելիքներ, ձևավորել հմտություններ, որոնք անհրաժեշտ են այլ առարկաների ուսումնասիրման և յուրացման, մասնագիտական գործունեության ընթացքում հանդիպող կիրառական խնդիրների լուծման համար, ուսանողներին ներկայացնել իրական թվերի բազմության, մի փոփոխականի ֆունկցիայի սահմանի, անընդհատության, ածանցյալի, դիֆերենցյալի, դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմների վերաբերյալ տեսությունները և գործնական կիրառությունները, սովորողների մոտ ձևավորել գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ բժշկության և առողջապահության ոլորտում ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների կիրառման և տիրապետման համար:</p>
<p>4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է</p>
<p>Իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> Ի1. իրական թվերի բազմության և տարրական ֆունկցիաների տեսակները Ի2. սահմանել մի փոփոխականի ֆունկցիայի սահմանի և անընդհատության հիմնական հասկացությունները, հատկությունները, ածանցյալը և դիֆերենցյալը, Ի3. Ինտեգրման հիմնական եղանակները, 1 և 2 կարգի դիֆերենցյալ հավասարումների լուծման մեթոդները: Ի4. Համակարգչային անվտանգությունը պահպանող ծրագրերի, համակարգչի ծրագրային գործունեությունը ապահովող դրայվերների, ծրագրերը մասնագիտական նպատակներին ծառայեցնելու մասին, <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> Կ1. Տեսական գիտելիքները կիրառել բժշկության մեջ՝ գործնական խնդիրներ լուծելու համար: Կ2. Մասնագիտական գործունեության համար օգտվել ուսումնական, գիտական, հանրամատչելի գրականությունից և համացանցից: Կ3. Ստեղծել բժշկական բազաներ, շնորհանդեսներ, ցուցադրություններ: Կ4. Կազմել մասնագիտական հարցումներ: <p>Տիրապետի՝</p> <ul style="list-style-type: none"> S1. Աշխատի թիմում, լուծի մասնագիտական խնդիրներ, կառուցի, հետազոտի և վերլուծի ֆունկցիաների գրաֆիկները: S2. Գտնի, ներբեռնի և օգտվի մասնագիտական հավելվածներից և շաբլոններից: S3. Իրականացնի մասնագիտական հետազոտություններ և հարցումներ: S4. Տիրապետի «MS Office» ծրագրերին:
<p>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնական մշակումներ 2. Claudia Neuhauser, “Calculus for Biology and Medicine”, Published by Pearson, United States (2011) 3. L.D. Hoffmann, G.L. Bradley, “Calculus For Business, Economics, and the Social and Life Sciences”, Published by McGraw-Hill, New York 2010, 10th Edition. 4. S. Calaway, D. Hoffman, D. Lippman, “Business Calculus”, USA, 2013. 5. Ս. Հարությունյան, «Բարձրագույն մաթեմատիկա», Երևան 2000 6. Ֆիլստենզոյց Գ.Մ. «Մաթեմատիկական անալիզի հիմունքներ»: Հատոր 1: Երևան: «Լույս»

հրատարակչություն, 1970.

7. Stephen Moffat, The Mouse Training Company " Word 2010 Advanced: Part I, Templates, Forms and Styles" 2014 Stephen Moffat, The Mouse Training Company .
8. Stephen Moffat, The Mouse Training Company " Excel 2010 Introduction: Part I Formulas, Functions and Formatting" 2011 Stephen Moffat,
9. Յու.Ս. Բարայան, «Բարձրագույն մաթեմատիկա և ինֆորմատիկա: Ուսումնական ձեռնարկ բուժական, ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների ուսանողների համար». Երևան: ԵՊԲՀ-ի հրատ., 2009:
10. Pert Mason "Windows 8.1 " 1st edition, 2014 Pert Mason & Bookboon
11. Shelley Fishel 1st edition, Shelley Fishel & Bookboon "Powerpoint 2016"
12. Robert E. Hoyt MD FACP" Medical Informatics Practical Guide for the Healthcare Professional" Third Edition, © 2009 Published by: Lulu.com

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ		ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ		16
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում		70
Ինքնուրույն անհատական աշխատանք		14
7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ		
Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100	A+
	90-95	A
«լավ»	80-89	B+
	70-79	B
«բավարար»	60-69	C+
	51-59	C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԲԺՇԿԱԿԱՆ ՏԻԶԻԿԱ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստումատոլոգիական		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստումատոլոգիա		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2020-2021		

ԿԱԶՄՈՂ	Ֆիզ. մաթ. գ. թ., դոցենտ Արմեն Գրիգորյան Ֆիզ. մաթ. գ. դ., պրոֆեսոր Ասատուր Լալայան
ՀԵՌԱԽՈՍ	+374 55 31 35 45, +374 10 64 87 80
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՅԵ	armeng9@gmail.com , gretau7@mail.ru

ԱՄԲԻՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ. գ. թ., Հ. Գ. Ջավրուշյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասակ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդակց. ժամ	Քննություն	Ստուգարք
I	II	3	17	3	90	51	24	27	25	14		+
Ընդամենը		3	17	3	90	51	24	27	25	14		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, կարողությունները և տիրապետումները՝

Գիտելիքներ

1. Հանրահաշվական և պարզ դիֆերենցիալ հավասարումների, ֆունկցիաների և ֆունկցիաների գրաֆիկների, ֆունկցիայի ածանցյալի մասին:
2. Մեխանիկայի հիմունքների, շարժում և դրանց բնութագրերի, պատկերացում ատոմի կառուցվածքի, լիցքի և դաշտերի մասին:
3. Մարդու օրգանիզմի կառուցվածքի, օրգան համակարգերի մասին:
4. Քիմիական միացությունների և կապերի մասին:

Կարողություններ

1. վերլուծել ֆիզիկական երևույթները, մեկնաբանել ֆիզիկական մեծությունները և դրանց կիրառելիությունը և բնական գործընթացների օրինաչափությունները:
